# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 44 (1994) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 14, 2020
VOLUME 40, NO. 44 (1994) SATURDAY NOVEMBER 14, 2020

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Հայկական Կողմը Շատ Ծանր Պայմաններով Ստորագրեց Զինադադարի Համաձայնագիրը

### Արցախի եւ Բանակի Ղեկավարութիւնը Համաձայն Եղած են Որոշումին

Կիրակի, Նոյեմբեր 9-ին Արցախեան Թատերաբեմին վրայ դէպքերը զարգացան շատ արագ: Առաւօտեան յայտարարուեցաւ, որ Շուշին դուրս եկած է Հայկական զօրքերու վերահսկող՛ութենէն եւ Թշնամին հոնկէ սկսած է յարձակումներ կազմակերպել մայրաքաղաք՝ Ստեփանակերտի ուղղութեամբ:

Երեկոյեան վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն հետ ղարաբաղեան պատերազմը ժամը 01.00-էն սկսեալ դադրեցնելու մասին յայտարարութիւն ստորագրած է, Հայկական կողմին համար շատ ծանր պայմաններով:

Վարչապետը յայտնեց, որ յայտարարութեան բովանդակութիւնը, որ արդէն հրապարակուած է, խիստ ցաւոտ է անձամբ իր եւ ժողովուրդի համար:

Վարչապետի այս յայտարարութենէն ետք խումբ մը քաղաքացիներ մուտք գործեցին Կառավարութեան շէնք եւ ապա Ազգային Ժողով, ուր ջարդուփշուր ըրին «Իմ Քայլը» խմբակցութեան պատգամաւորներու սենեակները եւ ծեծի ենթարկեցին Ազգային Ժողովի Նախագահ Արարատ Միրզոյեանին:



Ազգային ժողով ներխուժած ամբոխը կը բողոքէ ստորագրուած համաձայնութեան դէմ

Փաշինեան իր յայտարարութեան մէջ ըսաւ.

«Սիրելի հայրենակիցներ, քոյրեր եւ եղբայրներ. անձամբ իմ եւ բոլորիս համար ծանր, չափազանց ծանր որոշում եմ կայացրել:

«Ռուսաստանի եւ Ատրպէյճանի Նախագահներուն հետ ղարաբաղեան պատերազմը ժամը 01.00-ից դադարեցնելու մասին յայտարարութիւն եմ ստորագրել: «Յայտարարութեան տեքստը, որ արդէն հրապարակուել է, անասելի ցաւոտ է անձամբ ինձ եւ մեր ժողովրդի համար:

«Այդ որոշումը կայացրել եմ ռազմական իրադրութեան խորը վերլուծութեան եւ այդ իրադրութեանն ամենալաւը տիրապետող մարդկանց գնահատականի արդիւնքում: Նաեւ հիմնուելով այն համոզմունքի վրայ, որ ստեղծուած իրավիճակում սա ՀՆԱՐԱՒՈՐ ամենալաւ հանգուցալուծումն է: Այս ամէնի մասին առաջիկայ օրերին

Շար.ը էջ 4

## Ֆրանսա Կը Շեշտէ, Որ Պէտք է Երաշխաւորուի Արցախի Բնակչութեան Նկրտումները

Էլիզէ պալատը յայտարարած է, թէ կ'ուսումնասիրէ ղարաբաղեան հակամարտութեան շուրջ ձեռք բերուած համաձայնութիւնը, միաժամանակ ընդգծած է, որ որեւէ պայմանաւորուածութիւն պէտք է երաշխաւորէ «Ղարաբաղի քաղաքացիական բնակչութեան անվտանգութիւնն ու նկրտումները»:

«Անհրաժեշտ է անյապաղ քայլեր ձեռնարկել՝ հակամարտութեան տեւական լուծումը գտնելու համար, որ թոյլ կու տայ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան մնալու իրենց բնակավայրերը, տեղահանուած տասնեակ հազարաւորներուն ալ՝ վերադառնալու իրենց տուն»,- յայտարարած է Էլիզէ պալատը, աւելցնելով. «Ֆրանսան այս ծանր պահուն կանգնած է Հայաստանի ժողովուրդի կողքին»:

Ըստ «Ֆրանսփրեսի», Նախագահ՝ Էմմանուէլ Մաքրոնը միաժամանակ կոչ ըրած է Թուրքիոյ վերջ տալու իր սադրանքներուն, «որեւէ քայլ չընել, որ կարող է վնասել տեւական խաղաղութեան հնարաւորութեան»: «Խնդրի տեւական լուծումը պէտք է «պաշտպանէ Հայաստանի շահերը»,- ընդգծած է Ֆրանսայի առաջնորդը:

## Ռուսաստանի իշխանութիւնները Կը Յայտարարեն, Որ Կարողացած Են Դադրեցնել Ղարաբաղեան Պատերազմը

Ռուսաստանի Նախագահ՝ Վլատիմիր Փութին Նոյեմբեր 10-ի Շանկհայի համագործակցութեան կազմակերպութեան անդամ երկիրներու ղեկավարներու հանդիպման ընթացքին ունեցած իր ելոյթին մէջ յոյս յայտնած է, որ Ղարաբաղի մէջ երկարատեւ խաղաղութիւն կը հաստատուի, եւ որ այն, ինչ կը կատարուէր Ղարաբաղի մէջ, մեծ ողբերգութիւն էր:

«Մեծ բաւականութեամբ կը ցանկամ նշել նախանշուած փոխզիջումներով ու ձեռք բերուած համաձայնութիւններով արիւնահեղութիւնը դադրեցնելու մասին: Յուսով եմ՝ վերջին շրջանին մեր ձեռնարկած բոլոր քայլերը կը յանգեցնեն երկարատեւ խաղաղութեան հաստատման՝ ի բարօրութիւն Ատրպէյճանի եւ Հայաստանի ժողովուրդներուն», - այսօր յայտարարած է Փութինը:

«Այս պահուն մենք կը շարունակենք ելլել միջազգային իրաւունքի բոլոր համապատասխան հիմնական աքթերէն: Առաջին հերթին խօսքը ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի համապատասխան բանաձեւերու եւ այլ փաստաթուղթերու մասին է», - այս պատասխանը տուած է Ռուսաստանի նախագահի մամլոյ քարտուղարը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին հարցին:

Տմիթրի Փեսքովը նաեւ աւելցուցած է, որ Քրեմլինը երէկ գիշեր ստորագրուած յայտարարութիւնը կը համարէ երկու երկիրներու ժողովուրդներու յաղթանակը՝ ե՛ւ Ատրպէյճանի, ե՛ւ Հայաստանի, որովհետեւ կանգ առած է պատերազմը: «Որպէսզի պատերազմը կանգ առնէ, եւ որպէսզի այդ վերահսկուի եւ ապահովագրուի, այնտեղ այժմ կը մտնեն ռուս խաղաղապահները, անոնք կ'ապահովեն ռազմական գործողութիւններու շարունակական բացակայութիւնը», - ըսած է այսօր Փեսքով:

Քրեմլինը այսօր հրապարակած է յայտարարութիւնը: Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ՝ Մարիա Զախարովան այսօր «Էխօ Մոսկվի» ռատիոկայանի եթերով որոշ մանրամասնութիւններ յայտնած է, մասնաւորապէս շեշտած է, որ յայտարարութեան մէջ յստակ նշուած է, որ խօսքը միայն ռուսական

Շար.ը էջ 4

## Ճօ Պայտըն Ընտրուեցաւ Միացեալ Նահանգներու 46-րդ Նախագահ

Երկար սպասումէ ետք, Շաբաթ, Նոյեմբեր 7-ի առաւօտեան Ամերիկեան հեռատեսիլի ալիքները գրեթէ նոյն պահուն յայտարարեցին, որ Ճօ Պայտըն ընտրուած է Միացեալ Նահանգներու 46-րդ նախագահ:

Ճօ Պայտընի կողքին ընտրուեցաւ նաեւ Ամերիկայի պատմութեան առաջին կին եւ սեւամորթ փոխ նախագահը:

Այսպիսով Տանըլտ Թրամփը դարձաւ մէկ շրջանի նախագահ, պարագայ մը որ վերջին 50 տարիներուն պատահած է միայն երկու անգամ:

Պայտընի յաղթանակը յայտարարուելէ ետք հազարաւոր Ամերիկացիներ ողողեցին Սպիտակ Տան շրջակայ պողոտաներն ու այլ քաղաքներու հրապարակները՝ տօնելու Թրամփի պարտութիւնը եւ Պայտընի յաղթանակը:

Երեկոյեան նորընտիր նախագահը իր յաղթանակի պատգամը ուղղելով Ամերիկացի ժողովուրդին, միասնականութեան կոչ ըրաւ ու յայտարարեց որ ինք պիտի ծառայէ բոլորին՝ իրեն քուէարկողներուն եւ կամ ոչ:

Նախագահ Թրամփ առայժմ կը մերժէ ընդունիլ իր պարտութիւնը եւ կը խոստանայ դատարաններու միջոցաւ վիճարկել ընտրութիւններու արդիւնքները: Քաղաքական շրջանակներու կարծիքով այդ փորձերը դատապարտուած են ձախողութեան նկատի առնելով որ, Պայտընի առաւելութիւնը աւելի ամրապնդուեցաւ երբ ան տիրացաւ Փենսիլվանիայի եւ



Նորընտիր նախագահ Ճօ Պայտըն

Շար.ը էջ 6

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ծանր Աղմուկ. Ինչ Անել

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

*Հայաստանում ծանր աղմուկ է նախօրէին կայացուած քաղաքական մ որոշման հետեւանքով, որն այլ կերպ, քան պարզապէս հայկական պետականութեան կապիտուլյացիայ Արցախին պարտադրուած պատերազմում, գնահատել հնարաւոր չէ:*

*Հայաստանի քաղաքական ղեկավարութիւնը՝ վարչապետ Փաշինեանը փորձում է հանրութեանը բացատրել, թէ ինչ է տեղի ունեցել եւ ինչու՝ ասելով, որ այդ կապիտուլյացիոն որոշման պատճառը եղել է բանակի յորդորը՝ ծանր ռազմաճակատային իրավիճակից ելնելով հնարաւորինս արագ կանգնեցնել պատերազմը աւելին չկորցնելու համար: Զուգահեռ տարածւում են տեղեկութիւններ, որ եղել են դաւաճանական դրսեւորումներ՝ այդ իրավիճակը ծանրացնելու եւ Հայաստանին այդպիսի որոշում պարտադրելու համար:*

*Ին՞չ է եղել, ինչպէ՞ս, եղե՞լ են դաւաճաններ, թ՞է փնտրւում են քաւութեան նոխազներ՝ այդ բոլոր հարցերի պատասխանները պէտք է տա նոյն քաղաքական ղեկավարութիւնը, որը բնականաբար կայացուած որոշման գլխաւոր պատասխանատուն է: Եթէ եղել է դաւաճանութիւն, ապա դաւաճանները պէտք է հանրութեանը ներկայացուեն համոզիչ ապացոյցներով եւ ոչ թէ լոկ քարոզչական միջոցներով:*

*Ընդհանրապէս հարցերը շատ-շատ են, հարիւրաւոր եւ գուցէ հազարաւոր, սակայն այժմ ծանր, ծանրագոյն աղմուկ է մեր բոլորի ականջներում եւ հոգիներում: Մենք յաղթանակ ենք կորցրել, եւ միաժամանակ սխալ է ասել, թէ այն կորցրել ենք պատերազմի 45 օրերի ընթացքում:*

*Մենք յաղթանակ ենք կորցրել այդ իսկ յաղթանակի հաստատումից թերեւս անմիջապէս յետոյ՝ սկսելով պարտուել խաղաղութեան մրցավազքում, պարտուել պետական շինարարութեան մէջ, պարտուել պետական կառավարման անարդիւնաւէտութեամբ, պարտուել ներքին յարաբերութիւնների կառուցման անարդիւնաւէտութեամբ, պարտուել արժէքներով, գաղափարապէս եւ գլխաւորը՝ այդ ամէնում պարտուելով ոչ թէ թշնամուն, որը մեզանից աւելի որակ չի ունեցել, այլ ունեցել է աւելի շատ փող եւ թերեւս աւելի շահեկան դաշնակից, այլ պարտուելով ինքներս մեզ: Մենք թշնամուն չենք պարտուել, թշնամին չի կարողացել յաղթել մեր բանակին: Մենք պարտուել ենք ինքներս մեզ, առաջին յաղթանակից մինչեւ երկրորդ պատերազմի սկիզբը, պարտուել ենք ինքներս մեզ՝ ամենատարբեր սխալներով ու բացթողումներով:*

*Զափազանց ծանր է լինելու գալ յաղթանակի ռեժիմի, գիտակցել սխալները, չտրուել պատասխանատուութիւնից փախչելու գայթակղութեան, այլ պայմանաւորուել անելիքների շուրջ: Մենք պէտք է ձեւաւորենք յաղթանակի ազգային նպատակ, որը պէտք է լինի համազգային փոխզիջման արդիւնք: Այլընտրանք չկայ, այլընտրանքը ամբողջ պետականութեան կորուստն է:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Մեր Դարաշրջանի Խիղճը, Պատիւը Եւ Արժանապատուութիւնը

ԱՐԹՈՒՐ ՂԱՐԱԳՅՈԶՅԵԱՆ

*Քրիստոնէական մեր դաւանանքը մեզ քաղաքակրթել է երկու հազար տարի:*

*Նախաքրիստոնէական եւ քրիստոնէական ժամանակաշրջաններում մենք մեր պատմութիւնը կռել ենք ինքնապաշտպանական պատերազմներով, կոփել ենք սերունդներով, լինելով «փոքր ածու», ելել ենք յորդաների դէմ, որոնք մեր դէմ չեն դադարեցրել իրենց կռիւը մինչ այսօր:*

*Մենք մեր կռիւն էլ ենք տանում արժանապատիւ ու քաղաքակիրթ:*

*Սակայն մեր դիմաց կանգնած են աճելու (մտաւոր) եւ զարգանալու (քաղաքակրթօրէն) ունակութիւնից գենետիկօրէն զուրկ էթնիկ մնացուկներ, որոնք աճել են միայն քանակապէս: Որովհետեւ իրենց ուժն ու զօրութիւնը միայն քանակի մէջ է:*

*Մեր մէկ Յովհաննէս Աղամեանին նրանք պատասխանել են հարիւր իրենց քթահոսն ուտելով մեծացող լամուկներով, մեր երեք Օրբելիներին պատասխանել են հազար լամուկներով, մէկ Բաղրամյեանին՝ քսան հազար ասկյարցուներով:*

*Ու այսօր այդ քանակը գալիս է մեզ վրայ: Գալիս է՝ հողը հումուսացնելով հազարաւոր անկած ասկյարներով, շահիդներով: Ու պէտքները չէ:*

*Ու պէտքները չէ, որովհետեւ շատ են շատացել, որովհետեւ շատ են շատանում, որովհետեւ դա միակ բանն է, որ նրանք կարողանում են անել: Ոչնչացնում ես հարիւրը, հետեւից գալիս են երեք հարիւրը, ոչնչացնում ես, գալիս են հինգ հարիւրով՝ ոչնչացնում ես, գալիս է սրսկուած ու հաբակլլած հազարը: Կտրուած ձեռքերով, հաշմուած ոտքերով առաջ են սողում, որովհետեւ ցաւ չեն զգում: Ու չեն ափսոսում, որովհետեւ գիտեն վաղն էլ են մօլլային ասելու հրահանգ տուր, որ ամէն ընտանիք տասը-տասնհինգով քանակ աւելացնի: Ու կատարելու են: Սակայն, ինչպէս ասում են, երբեմն եկեղեցում էլ է մոմը պրծնում: Մեր ամէն մարտիկ, ում մէջ ռազմիկը ներծծուած է գենետիկօրէն, կարող է ոչնչացնել մինչեւ հարիւր-հարիւրհիսուն կամուֆլյաժ հագած առեւտրականի, խոցել բազմապատիկ գրահատեխնիկա:*

*Բայց ին՞չ կապ ունեն սրանք քաղաքակրթութեան հետ. այստեղ, մեր դիմաց, թշնամու մօտ իսպառ բացակայում է քաղաքակրթութիւնը: Այստեղ կայ բնազդ, նաւթ ու արեան ծարաւ:*

*Իսկ որտե՞ղ է քաղաքակրթութիւնը:*

*Անկեղծ ասած՝ չեմ գտնում:*

*Միթ՞է այնտեղ է, որտեղ շների ու կատուների իրաւունքները պաշտպանուած են օրէնքներով, եւ դրանց պաշտպանութեան համար գործում են բազմաթիւ հասարակական կազմակերպութիւններ, իսկ Ստեփանակերտի ու Շուշիի ռմբակոծութիւնների հետեւանքով զոհուած ու վիրաւորուած քաղաքացիները (մարդիկ) իրենց կատուի մաշկից հեռու են:*

*Միթ՞է այնտեղ, որտեղ ամենաազատական օրէնքներով պաշտպանուած են ամենատարբեր գունաւորումների փոքրամասնութիւնների իրաւունքները: Այն մասնութիւնների, որոնք ամբողջ էութեամբ հակառակ են Քրիստոսի ուսմունքին ու Սուրբ Գրքին, սակայն ում իրաւունքները պաշտպանում են քահանայապետերը:*

*Փարիսեցինե՞ր:*

*Միթ՞է այնտեղ, ուր բարոյական արժէքները ստորադասւում են դոլարների ու եւրոների քանակներին, նաւթի հոտին, պետութեան անունից սեփական գրպանը լցնելուն:*

*Եւ միթ՞է այնտեղ, ուր վերեւի հարկի հարեւանները, իմանալով, որ առաջին հարկի հարեւանը իր ընտանիքի բոլոր անդամներով պաշտպանում է մուտքի դուռը աւազակներից, օգնութեան չեն հասնում՝ լաւ իմանալով, որ առաջին հարկ ներխուժելուց յետոյ աւազակները մտնելու են նաեւ իրենց տները:*

*Այս «տարածքներում» այլեւս քաղաքակրթութիւնը կնքել է իր մահկանացուն:*

*Մեզ մնում է միայն քաշել տապանաքարը եւ գրել.*

*«Աստ ՑԱՆԳՁԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ»:*

*Իսկ մենք յաղթում ենք, որովհետեւ մեզ հետ է ԱՍՏՈՒԱԾ: ԱՄԷՆ:*

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»*

# Պետք է Հնարավորինս Արագ Փակել Այդ Հարուածների Ճանապարհը

*Նոյեմբերի 9-ի երեկոյեան Հայաստանի հանրային տրամադրութիւններում վտանգաւոր փոթորիկ ու տագնապ առաջացրեց Արցախի նախագահի խօսնակ Վահրամ Պողոսեանի գրառումը Շուշիի հանդէպ վերահսկողութեան ամբողջական կորստի մասին: Այն, որ Շուշիի համար արդէն մի քանի օր մղւում են յամառ ու ծանր մարտեր, պարբերաբար տեղեկացնում էին Հայաստանի ՊՆ խօսնակն ու ՊՆ ներկայացուցիչը: Նրանք յայտնում էին, որ մարտերը շարունակւում են, ու այդ ֆոնին ԱՀ նախագահի խօսնակի գրառումը, որ Շուշին կորսուած է եւ վտանգի տակ է Ստեփանակերտը, ուղղակի ցնցեց հանրութեանը: Ամբողջ հարցն այն է, որ այստեղ խնդիրը ինքնին ցնցուող հանրութիւնը չէ, կը ցնցուի՝ կ'անցնի, երբ հայկական ուժերը կը պահեն Շուշին եւ հետ կը շպրտեն այն գրաւել փորձող թշնամուն:*

*Ամբողջ խնդիրն այն է, որ հանրային ցնցում առաջացնող եւ փաստօրէն ռազմաճակատային իրավիճակի հետ հակասութեան մէջ մտնող այդպիսի գրառումը, այն էլ պատասխանատու կարգավիճակ ունեցող անձի գրառումը, կարող է ցնցել պաշտպանական համակարգը: Իսկ դա արդէն իր հերթին կարող է բերել լրջագոյն խնդիրների: Որովհետեւ՝ կա՛մ ուղիղ, կա՛մ հասարակութեան արձագանքի հայելային արտացոլումով, այդպիսի տեղեկատուական, հոգեբանական ցնցում առաջացնող գրառումները հասնում են կեանքի ու մահուան կռիւ տուող բանակին, զինուորին, սպային, հրամանատարին: Եւ այդ պարագայում դժուար է պատկերացնել անգամ, թէ ինչ են մտածում նրանք այդ արձագանքները ստանալիս: Եւ առաջին հերթին մտածում են, թէ ինչ քաղաքական իրավիճակ է թիկունքում, ինչ է կատարւում, ինչու են արւում տարօրինակ եւ տարակուսելի գրառումներ, օրինակ, Շուշին կորցնելու մասին՝ եթէ մարդիկ այդ պահին կռւում ու կեանքի գնով պահում են Շուշին: Այդ մտորումները ուղղակի հարուածում են բանակին եւ խանգարում կատարել խնդիրները: Եւ պետք է նկատել, որ տեղեկատուական իրողութիւնների այս իրարամերժութիւնը մի երեւոյթ է, որը պատերազմի ընթացքում դրսեւորուել սկսել է արդէն շաբաթներ առաջ:*

*Պէտք է հնարաւորինս արագ ձեռնարկուեն քայլեր հասարակութեան թիկունքից հասցուող տեղեկատուական հարուածները կանխարգելելու եւ ուղիները փակելու համար՝ լինեն դրանք կամայ, թէ ակամայ, դիտաւորութեամբ, թէ պարզապէս թիւրիմացութեամբ, մարդկային գործօններով պայմանաւորուած հարուածներ: Պատերազմի պայմաններում տեղեկատուական քաղաքականութիւնը պէտք է գործի պատերազմի տրամաբանութեամբ, պատերազմի օրէնքներով:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ԼՈՒՐԵՐ

# «Պղտոր Ջրում Ձուկ Որսացողներ՝ Դեռ Կը Խօսենք». Փաշինեան


Փաշինեան ելոյթ կ՛ունենայ ֆէյսպուքեան ուղղիդ հեռարձակման ընթացքին

«Բոլոր այն քաղաքացիներն, ովքեր կապ չունեն ջարդարարների հետ խնդրում եմ գնալ տուն: Բոլոր այն քաղաքացիներին, ովքեր հաւատում են ինձ եւ հաւատում են մեզ՝ խնդրում եմ պատրաստուել պայքարի», - ֆեյսպուքեան իր էջին վրայ գրած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ դիմելով կառավարութեան եւ Ազգային ժողովի շէնքերուն մօտ հաւաքուած քաղաքացիներուն:

Երկուշաբթի երեկոյեան, որոշ մարդիկ ներխուժած են կառավարութեան եւ Ազգային ժողովի շէնքեր եւ կատարած՝ անկարգութիւններ:

«Յանկարծ վայրկեան անգամ չկասկածէք՝ որ որեւէ անազնիւ բան չենք արել, որեւէ գործարքի չեմ գնացել եւ գործել եմ այնպէս, որ ունենամ բոլոր հարցերի պատասխանները եւ մաքուր լինեմ հայրենիքիս, ժողովրդի առաջ: Այս ծանր պահին պիտի կանգնենք կողք-կողքի՝ ընդդէմ սերմնացու գողացող մկների: Պղտոր ջրում ձուկ որսացողներ՝ դեռ կը խօսենք», - գրած էր Փաշինեան:

# Լեւոն Տէր Պետրոսեան Կը Զգուշացնէ Քաղաքացիական Պատերազմի Կործանարար Հետեւանքներէն


Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան

«Ստեղծուած ճգնաժամային իրավիճակից առանց նոր կորուստների դուրս գալու հրամայականը քաղաքացիական պատերազմի վտանգից խուսափումն ու ներքաղաքական հակասութիւնների յաղթահարումն է բացառապէս սահմանադրական ճանապարհով», յայտարարած է Հայաստանի առաջին նախագահ, Հայ ազգային քոնկրեսի ղեկավար՝ Լեւոն Տէր Պետրոսեան:

«Քաղաքացիական պատերազմը Թուրք-ատրպէյճանական դաշինքին մեծագոյն նուէր լինելուց բացի, կործանարար կը լինի թէ՛ Արցախի, թէ՛ Հայաստանի, եւ թէ՛ ողջ հայութեան համար», - Ilur.am-ի իր յայտարարութեան մէջ նշած է Տէր Պետրոսեան:

Առաջին նախագահը յոյս յայտնած է, որ ազգի ճակատագրով մտահոգ կուսակցութիւնները, հասարակական-քաղաքական խումբերը, ուժային կառոյցները, մտաւորականութեան հեղինակաւոր ներկայացուցիչները եւ ընդհանրապէս «պատասխանատուութեան զգացում ունեցող բոլոր ուժերը կը գործադրեն իրենց ողջ ազդեցութիւնը՝ նման աղէտալի հեռանկարից խուսափելու համար»:

# Մարդու Իրաւունքներու Պաշտպանը Կը Դատապարտէ Յարձակումները Ազ Նախագահի Եւ «Ազատութիւնի» Գրասենեակին Վրայ



Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպան Արման Թաթոյեան

Անընդունելի եւ դատապարտելի է Ազգային ժողովի նախագահ՝ Արարատ Միրզոյեանի նկատմամբ կիրառուած բռնութիւնը ու այն ալ՝ երբ երեխան եղած է ինքնաշարժին մէջ, յայտարարած է Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպանը՝ մաղթելով խորհրդարանի խօսնակին շուտափոյթ ապաքինում:

«Դատապարտելի է այն, որ յարձակման է ենթարկուել «Ազատութիւն» ռատիոկայանի երեւանեան գրասենեակը: Ինչպէս վկայում են այս պահի տուեալները, տեղի է ունեցել լրատուամիջոցի գոյքի ու սարքաւորումների նկատմամբ յարձակման փորձ, ինչպէս նաեւ ըստ այս պահի տուեալների՝ յարձակում է եղել լրատուամիջոցի աշխատակիցների նկատմամբ», - ըսուած է մարդու իրաւունքներու պաշտպանի յայտարարութեան մէջ: «Բացի այն, որ նման արարքները օրէնքով արգիլուած են, այս դժուար օրերուն լրատուամիջոցները կարեւորագոյն գործառոյթներ են կատարում», - կը շեշտէ Արման Թաթոյեան:

«Այս դժուար օրերին պէտք է ուղղակի բացառել իրար նկատմամբ բռնութեան որեւէ դէպք, պէտք է բացառել անգամ բռնութեան որեւէ կոչ կամ հնարաւորութիւն: Դա միայն աւելացնում է լարուածութիւնը: Այս ճակատագրական օրերին մեզ առաւել, քան երբեւէ անհրաժեշտ է համերաշխութիւն ու համախմբուածութիւն», - ըսուած է յայտարարութեան մէջ:

«Իւրաքանչիւրս պէտք է գիտակցենք ամէն պահ, որ մենք ունենք պետութիւն, որտեղ գործում են օրէնքներ ու մեր պետութիւնում կան պատասխանատու մարմիններ, որոնք պարտաւոր են գործել այդ օրէնքներին ու իրաւունքին համապատասխան: Մեր այդ պետականութիւնն են հիմա պաշտպանում մեր հերոս զինուորները սահմանին», - յայտարարած է Արման Թաթոյեան:

# Արայիկ Յարութիւնեան. «Ստիպուած Ենք Եղել Կայացնել Երեկուայ Որոշումը»


Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան կը խօսի Նոյեմբեր 9-ի որոշումի մասին

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան յայտարարած է, որ «ստիպուած ենք եղել» կայացնել երէկուայ՝ Նոյեմբեր 9-ի որոշումը՝ ռազմական իրավիճակով պայմանաւորուած: Տեղեկացնելով, որ քննարկումներ ունեցած է Հայաստանի վարչապետի, ինչպէս նաեւ Արցախի Ազգային ժողովի հետ ու ստացած պատգամաւորներու գերակշիռ մեծամասնութեան համաձայնութիւնը, Յարութիւնեան գիշերը տեղեկացուցած էր, որ ինքն ալ տուած է իր համաձայնութիւնը ժամ առաջ դադրեցնելու պատերազմը:

Ըստ Արցախի նախագահի՝ Շուշիի նկատմամբ ամբողջական վերահսկողութիւնը կորսնցուցած են նոյեմբեր 7-ին, եթէ մարտական գործողութիւնները շարունակուէին նոյն ընթացքով, օրերու ընթացքին կը կորսնցնէին նաեւ ողջ Արցախը. - «43 օր մարտական գործողութիւնների արդիւնքում մենք կորցրել ենք Ֆիզուլիի շրջանը, Ջաբրայիլի շրջանը, Կուբաթլուի, Զանգելանի, Հադրութի շրջանը հիմնականում, Մարտունի շրջանից ինչ-որ մաս, Ասկերանի շրջանից եւ ամենագլխաւորը՝ Շուշին: Մարտերն ընթանում էին Ստեփանակերտի մատոյցներում՝ 2-3 քիլոմեթր հեռաւորութեան վրայ: Եթէ շարունակուէին այդ ընթացքով մարտական գործողութիւնները, օրերու ընթացքին մենք կը կորցնէինք ամբողջ Արցախը, կ՛ունենայինք շատ աւելի զոհեր»:

Յարութիւնեան, խօսելով եռակողմ՝ Հայաստանի, Ատրպէյճանի ու Ռուսաստանի միջեւ ստորագրուած յայտարարութեան մասին, քանի մը ժամ առաջ ըսած էր, որ անոր առաւել մանրամասն կ՛անդրադառնայ աւելի ուշ: Առաւօտեան, սակայն, դիմատետրի ուղիղ հեռարձակման ժամանակ չյստակեցնելով, յայտարարեց, թէ ամէն ինչ դեռ առջեւն է, անով ոչ թէ կ՛աւարտի, այլ կը սկսի ամէն ինչ: Տեղեկացուց, որ Արցախի քաղաքական ու ռազմական գործիչներու հետ խորհրդակցութիւններ սկսած է, ան իր նախկին պաշտօնակիցներու անունները տուաւ, Արցախի անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղար՝ Վիթալի Բալասանեանինը: Վերջին օրերուն Բալասանեան Հայաստանի վարչապետի ու անոր գլխաւորած կառավարութեան օր առաջ հեռացումը պահանջողներէն է:

Դիմատետրի վերջին հեռարձակման ընթացքի քննարկումներէն փակագծեր չբացաւ, ըսելով, թէ քայլերու մասին առաջիկային կը տեղեկացնէ. - «Մենք չենք պարտուել, եկել ենք մի համաձայնութեան, որ պէտք է ցանկացած որոշում կայացնելուց առաջ, իսկ մեր որոշումները դեռ առջեւում են, պէտք է միասին կատարենք: Ես նշեցի, որ սկսել եմ խորհրդակցութիւններ եւ բոլորի հետ քննարկելուց յետոյ կը ներկայացնենք: Ի դէպ, վերջին մի քանի օրերին յաճախակի քննարկումներ եմ ունեցել, եւ բոլորն էլ միակարծիք էին՝ փորձել ժամանակաւոր, թէ մշտական զինադադար ունենալ, բոլորն անխտիր»:

# ԼՈՒՐԵՐ

## Բանակը Շարունակաբար 'Պնդած Է Զինադադար Ապահովելու Անհրաժեշտութիւնը. Փաշինեան

Հայաստանի վարչապետի, Ատրպէյճանի ու Ռուսաստանի նախագահներու միջեւ յայտարարութիւնը ստորագրելու որոշումը կայացուած է, երբ բանակը շարունակաբար պնդած է զինադադար ձեռք բերելու անհրաժեշտութեան մասին, Նոյեմբեր 10-ի կէսօրուայ մօտ դիմատետրի ուղիղ հեռարձակմամբ յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Այսպիսի որոշում կայացրել եմ այն բանից յետոյ, երբ որ, ըստ էութեան, բանակը շարունակաբար պնդել է նման քայլի գնալու անհրաժեշտութիւնը: Այսինքն պատկերացնո՞ւմ էք, չէ՞, երբ որ բանակն ասում է, որ պէտք է կանգնել, որովհետեւ մենք ունենք որոշակի խնդիրներ, որոնց լուծման հեռանկարը կամ չի երեւում, կամ էդ խնդիրները լուծելու միջոցը սպառուած է, կամ այդ խնդիրների չլուծման, կամ այդ խնդիրների գոյութեան արդիւնքում մենք ունենք որոշակի խնդիրներ», - նշած է վարչապետը:

Փաշինեան մանրամասնութիւններ ներկայացուց. «Օրինակ՝ Զինուած ուժերի զօրամասը, գունդը պէտք է մարտական նպատակով տեղափոխուի, բայց այդ գունդի դուները, տուեալ բնակավայրի բնակիչներ փակում են զօրամասի դուները, շրջափակում են դուները, մեքենաները եւ թոյլ չեն տալիս, որ զօրամասից մեքենաները դուրս գան, մենք ունեցել ենք այսպիսի տասնեակին մօտիկ դէպքեր: Սա բերել է շատ լուրջ եւ շատ ծանր հետեւանքների, որի հետեւանքները մենք տեսել ենք եւ իմացել ենք առաջնագծում: Յաջորդ խնդիրը մեր զօրահաւաքային համակարգի խնդիրն է, փորձը ցոյց տուեց, որ քաղաքացիական կեանքից եկած մարդիկ, ցաւօք սրտի, այնքան էլ պատրաստ չեն ռազմական գործողութիւնների լիարժէք մասնակցելու, եւ նրանք արագ կորցնում են մարտունակութիւնը, եւ դա խնդիրներ է առաջացնում»:

Թէ ստորագրուելիք յայտարարութեան մասին ինչո՞ւ նախապէս չէ ըսուած՝ Փաշինեան բացատրեց բանակի մարտունակութիւնը ապահովելու ձգտումով: «Առաջինը ես ինքս եմ ընդունել, որ այդ յայտարարութեան բովանդակութիւնը լաւը չէ մեզ համար եւ պատկերացրէք մի այսպիսի իրավիճակ, երբ այդ բովանդակութիւնը ներկայացուում է եւ արդիւնքում ինչ-ինչ պատճառներով չի ստորագրուում, դա շատ բացասական հետեւանք կ'ունենար մեր մարտունակութեան վրայ: Միւս պատճառն էլ կայ, որն էլի նոյն համաթեքսթի մէջ է, որ երբ որ հանրութեանը ներկայացնում ես այդ բովանդակութիւնը, պէտք է բացատրես նաեւ, թէ ինչու ես այդպիսի բան անում, երբ որ դա անում ես մարտական գործողութիւններին զուգընթաց, դրանով նաեւ հակառակորդի համար բացայայտում ես քո որոշակի թոյլ տեղերը», - ըսաւ Հայաստանի վարչապետը:

Թէ ինչու, օրինակ, Սեպտեմբեր 27-ին՝ պատերազմի առաջին օրը, նոյն պայմաններով հրադադար չէ կնքուած, Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ Սեպտեմբեր 27-ին ալ զինադադարի պայմանները նոյնն էին՝ յանձնել 7 շրջանները, սակայն նման քայլ չեն առած, որովհետեւ կը հաւատային, որ հայ ժողովուրդը եւ բանակը կը կարողանան այնպէս ընել, որ հայկական կողմերը հրադադար պարտադրեն:

Օրուայ ընթացքին Փաշինեան կրկին դիմատետրի տեսաուղերձով դիմեց հանրութեան:

«Պատերազմից առաջ, երբ որ կար նախանշաններ, որոշէի որ պետք է այս պատերազմը կանխել, եւ այդ ժամանակ էլ պէտք է էլի գայի ասէի՝ գիտէք ի՞նչ ժողովուրդ ջան, ուրեմն մենք սենց ընտրութիւն ունենք, կամ առնուազն 5 շրջանը յանձնում ենք առանց որեւէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը ճշգրտելու կամ պատերազմ ենք ունենում: Ինչո՞ւ չենք եկել ու ասել, նախ, որովհետեւ ես չէի ուզում, որ մենք էդպէս յանձնուենք, ես հաւատում էի, որ մենք կարող ենք պայքարել մեր ժողովրդի, Արցախի ժողովրդի իրաւունքների համար, հիմա էլ եմ հաւատում: Երկրորդը՝ եթէ գայի ասէի՝ գիտէք ի՞նչ կամ հիմա մենք էս ենք անում, կամ էլ պատերազմ է լինում, ի՞նչ էր ասելու հայ հանրութիւնը, դուք պատկերացրէք էսօր, երբ որ մենք, ցաւօք, էդքան անյաջողութիւն ունեցանք պատերազմում, պատկերացրէք էսօր կամ էսօր էլ չէ՝ մի տասը օր առաջ մի անգամ ցաւոտ փոխզիջում արտայայտութիւն թոյլ տուեցի, դա ահաւոր վատ արձագանգ ունեցաւ, ի՞նչ էր ասելու հայ հանրութիւնը, հայ հանրութիւնն ասելու էր՝ ոչ, մենք կը գնանք, կը կռուենք եւ կը պաշտպանենք մեր ժողովրդի իրաւունքները: Ակնյայտ է, չէ՞, որ այսպէս էր լինելու, եւ արդիւնքում մենք ստանալու էինք պատերազմ», - նշեց Հայաստանի վարչապետը:

## Հայաստանի Վարչապետի, Ատրպէյճանի Եւ Ռուսաստանի Նախագահներու Զինադադարի Մասին Յայտարարութիւնը

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակած է Հայաստանի վարչապետի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու ստորագրած յայտարարութիւնը:

«Մենք՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ Ն. Վ. Փաշինեանը, Ատրպէյճանի Հանրապետութեան Նախագահ՝ Ի.Հ. Ալիեւը եւ Ռուսաստանի Դաշնութեան Նախագահ՝ Վ.Վ. Փութինը յայտարարեցինք հետեւեալը.

1. 2020 թուականի 10 Նոյեմբերի Մոսկուայի ժամանակով 00:00-ին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտիին վրայ կը յայտարարուի ամբողջական հրադադարի եւ բոլոր ռազմական գործողութիւններու աւարտի մասին: Հայաստանի Հանրապետութիւնը եւ Ատրպէյճանի Հանրապետութիւնը, այսուհետ՝ կողմեր, կանգ կ'առնեն իրենց գրաւած դիրքերը:

2. Աղդամի շրջանը կը վերադարձուի Ատրպէյճանի Հանրապետութեան մինչեւ 2020 թուականի 20 Նոյեմբերը:

3. Լեռնային Ղարաբաղի շփման գծի եւ Լաչինի միջանցքի երկայնքով կը տեղակաուի Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրախումբ՝ 1960 զինծառայող կրակային զէնքով, 90 զրահամեքենայ, 380 միաւոր մեքենայ եւ յատուկ զրահամեքենայ:

4. Հայկական զինուած ուժերու դուրս ելլելուն զուգահեռ կը տեղակաիւի Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրակազմը: Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրամիաւորման մնալու տեւողութիւնը 5 տարի է՝ հետագայ 5-ական տարիներով ինքնաբեր երկարաձգմամբ, եթէ կողմերէն մէկը ժամկէտի աւարտէն 6 ամիս առաջ չի յայտարարեր սոյն դրոյթի կիրառումը դադրեցնելու մտադրութեան մասին:

5. Հակամարտութեան կողմերու կողմէն համաձայնագիրներու կատարման վերահսկողութեան արդիւնաւէտութիւնը բարձրացնելու նպատակով հրադադարի ռեժիմը վերահսկելու համար կը ստեղծուի խաղաղապահ կեդրոն:

6. Հայաստանի Հանրապետութիւնը Ատրպէյճանի Հանրապետութեան կը վերադարձնէ Քելբաջարի շրջանը մինչեւ 2020 թուականի 15 Նոյեմբերը, իսկ Լաչինի շրջանը՝ մինչեւ 2020 թուականի 1 Դեկտեմբերը: Լաչինի միջանցքը (5 քմ լայնութեամբ), որ կ'ապահովէ Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ եւ միեւնոյն ժամանակ չի շօշափեր Շուշի քաղաքը, կը մնայ Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրախմբի վերահսկողութեան ներքոյ: Կողմերու համաձայնութեամբ, առաջիկայ երեք տարիներու ընթացքին կ'որոշուի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղիի կառուցման նախագիծ, որ կ'ապահովէ կապը Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ, հետագային այդ երթուղին պաշտպանելու համար ռուսական խաղաղապահ զօրախումբը կը տեղափոխուի այնտեղ: Ատրպէյճանի Հանրապետութիւնը կ'երաշխաւորէ Լաչինի միջանցքով քաղաքացիներու, փոխադրական եւ բեռնատար միջոցներու երթեւեկի անվտանգութիւնը երկու ուղղութիւններով:

7. Ներքին տեղահանուած անձինք եւ փախստականները ՄԱԿ-ի փախստականներու հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակի վերահսկողութեան ներքոյ կը վերադառնան Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից տարածքներ:

8. Տեղի կ'ունենայ ռազմագերիներու, պատանդներու եւ պահուող այլ անձանց ու մահացողներու մարմիններու փոխանակում:

9. Տարածաշրջանին մէջ բոլոր տնտեսական եւ փոխադրական կապերը կ'ապաշրջափակուին: Հայաստանի Հանրապետութիւնը կ'երաշխաւորէ փոխադրական կապերու անվտանգութիւնը Ատրպէյճանի Հանրապետութեան արեւմտեան շրջաններու եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան միջեւ՝ երկու ուղղութիւններով քաղաքացիներու, փոխադրական միջոցներու եւ ապրանքներու անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար: Փոխադրական հաղորդակցութեան հսկողութիւնը կ'իրականացնեն ՌԴ Անվտանգութեան դաշնային ծառայութեան (ԱԴԾ) Սահմանապահ ծառայութեան մարմինները: Կողմերու համաձայնութեամբ կ'ապահովուի նոր փոխադրական հաղորդակցութիւն, որ կը կապէ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւնը եւ Ատրպէյճանի արեւմտեան շրջանները»:

## Ռուսաստանի իշխանութիւնները

Շարունակուած էջ 1-էն

խաղաղապահներու մասին է. - «Շատ կարեւոր մէկ բան, որու վրայ ես կ'ուզէի ուշադրութիւն դարձնել: Խօսքը ռուսական խաղաղապահ ուժերու մասին է, բացառապէս ռուսական խաղաղապահներու մասին, որոնք պիտի տեղակայուին Լեռնային Ղարաբաղի շփման գիծի ողջ երկայնքով»:

Ընդ որում, թէ՛ Ռուսաստանի նախագահը իր յատուկ ուղերձով, թէ՛ այսօր Մարիա Զախարովան, ըստ էութեան, կը շեշտեն, որ հիմնականը ռուսական կողմի համար այս յայտարարութեան մէջ ռուսական խաղաղապահներու մասին կէտն է:

Աւելցնենք, որ Անգարան կը խօսի այն մասին, որ խօսքը ոչ թէ ռուս խաղաղապահներու մասին է, այլ ռուս-թրքական, Մոսկուան ալ այս փաստօրէն կը հերքէ: Ամէն պարագային ռուս խաղաղապահները արդէն Հայաստան եւ Ղարաբաղ են:

## Շատ Ծանր Պայմաններ

Շարունակուած էջ 1-էն

հանդէս կը գամ մանրամասն ուղերձով:

«Սա յաղթանակ չէ, բայց չկայ պարտութիւն, քանի դեռ ինքդ քեզ պարտուած չես ճանաչել: Մենք մեզ երբեք պարտուած չենք ճանաչի եւ սա պէտք է դառնայ մեր ազգային համախմբման, վերածննդի դարաշրջանի մեկնարկ:

«Մենք պէտք է վերլուծենք մեր անկախութեան տարիները, մեր ապագան պլանաւորելու եւ անցեալի սխալները չկրկնելու համար:

«Ծնկի եմ իջնում մեր բոլոր նահատակների առաջ: Խոնարհւում եմ մեր բոլոր այն զինուորների, սպաների, գեներալների, կամաւորների առաջ, ովքեր իրենց կեանքով են պաշտպանել ու պաշտպանում հայրենիքը: Նրանք իրենց անձնուրացութեամբ փրկել են արցախահայութեանը:

«Մենք պայքարեցինք մինչեւ վերջ: Եւ մենք յաղթելու ենք: Արցախը կանգուն է:

«Կեցց'է Հայաստանը: Կեցց'է Արցախը», - յայտարարեց վարչապետը:

Փաշինեանի յայտարարութենէն ետք ելոյթ ունեցաւ Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան, յատնելով որ իր համաձայնութիւնը տուած է զինադադարի պայմաններուն ամէն ինչ չկորսնցնելու համար:

«Ժամանակն է Եւ Պարտաւոր Ենք Դադարեցնել Արիւնահեղութիւնը, - Յայտարարեցին ՀՀ Պաշտպանութեան Նախարարութիւնը Եւ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտապը

www.massisweekly.com

# Ի՞նչ Ընել

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Ահռելի ծանր սրտով է, որ գրի կ՛առնենք մեր այս խորհրդածութիւնները, ժամեր առաջ յայտարարուած Արցախեան պատերազմի համաձայնութեան խորապէս ճնշիչ ազդեցութեան տակ: Ապշանք, հիասթափութիւն, մերժում, ժխտում, զայրոյթ, ընդվզում, զգացումներու ահաւոր խառնիճաղանճ մը կը ճնշէ մեր սրտին վրայ: Այս վիճակէն դուրս գալու թերեւս ամենահեշտ միջոցը պիտի ըլլար պատասխանատու մարդկանց այպանելը եւ զանոնք դաւաճանութեամբ մեղադրելը: Եթէ սրտի թեթեւութիւն կ՛ուզենք, ուրեմն տրուինք մեր զգացումներուն եւ պարպենք մեր սիրտը մօտ ու հեռու դաւաճաններու վրայ: Բայց այդպիսի մօտեցում մը որեւէ օգուտ պիտի չբերէ բուն խնդրի լուծման եւ նոյնիսկ կրնայ ժխտական հետեւանքներ ալ ունենալ, պառակտելով մեր ժողովուրդը եւ բարդացնելով մեր վնասները: Մինչ եթէ փորձենք անսալ մեր մտքին ու սառ դատողութեամբ քննականօրէն հաշուարկել իրավիճակը, այդպիսով կրնանք սահմանափակել մեր կորուստները: Բնականաբար այս երկրորդը շատ աւելի դժուար է: Բայց մեր քաղաքական եւ մտաւորական ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ գործիչները անմիջապէս պէտք է լծուին այս վիթխարի աշխատանքին: Սպասելի է, որ անոնք այպանուին զուտ զգացումներէ տարուած ամբոխին կողմէ, ինչպէս նաեւ պատեհապաշտ գործիչներու կողմէ, բայց պէտք չէ ընկրկիլ: Մենք անձնապէս ենթարկուած ու յաղթահարած ենք այդ փորձառութիւնը, երբ 1990-ականներուն համայնքիս թերթերէն մին դաւաճանի պիտակը ,շնորհեց մեզի:

Որպէսզի համոզուինք, որ այսպիսի զարգացումներ սպասելի են կորուստներու յետնօրեակին, խօսքը տանք Հայաստանի Ա. Հանրապետութեան Ա. Վարչապետ Յովհաննէս Քաջազնունիի, որ նկարագրելով 1915-1916 թուականներու ,ընդհանուր սուգի ու յուսահատութեան շրջանը, կը գրէ. «Ջայրացած ու սարսափած, որոնեցինք յանձաւորներին ու գտանք իսկոյն. Ռուս կառավարութեան նենգ քաղաքականութիւնը: Քաղաքականապէս տհաս ու մտքով անհաւասարակշռուած մարդկանց յատուկ անհետեւականութիւնով, մի ծայրայեղութիւնից ընկանք անմիջապէս հակառակ ծայրայեղութեան մէջ: Որքան կոյր ու անհիմն էր մեր երեկուայ հաւատը ռուս կառավարութեան հանդէպ, նոյնքան կոյր ու անհիմն էր այսօրուայ մեղադրանքը: ...Գանգատուել դառնօրէն չար բախտից ու մեզանից դուրս որոնել մեր դժբախտութիւնների պատճառը, սա եւս մեր ազգային հոգեբանութեան բնորոշ գծերից մեկն է... ինքներս այնքան միամիտ ու անհեռատես ենք եղել, որ դրել ենք մեզ (կամ թոյլ ենք տուել դնելու) այնպիսի դրութեան մէջ, որ ամէն ցանկացող կարողանայ խաբել, լքել, դաւաճանել, կոտորել կամ կոտորել տալ մեզ:»

Ուրեմն մեր կրած կորուստին համար, ամբոխը բնականաբար յանձաւոր պիտի գտնէ Փաշինեանը, զայն որակելով դաւաճան: Մարդիկ նոյնիսկ պիտի «երանի տան» Ռոպերթ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի իշխանութեանը: Զգացումներու տրուած «տաք» գլուխներու մտածելակերպ է այս: Սառ դատողութեան տէր մարդիկ պիտի նկատի ունենան հետեւեալ կէտերը, նախքան որեւէ վճիռ արձակելը:

1994-էն ի վեր ԵԱՀԿ-ի որոշումները կը պարտադրէին մեզ քաշուիլ ծանօթ 5 + 2 շրջաններէն:

Քոչարեան/Սարգսեան զոյգը համաձայն ըլլալով հանդերձ այս իրողութեան, կը ձգձգէին որեւէ քայլ առնել, իրենցմէ ետք եկող իշխանութեան մը վրայ բարդելով այդ պատասխանատուութիւնը:

Անոնք իրենց իշխանութեան 20 տարիներու ընթացքին ականատես էին Ազրպէյճանի միլիարդաւոր տոլարներու հասնող սպառազինութեան, որոնք կը սպառնային մեր ապահովութեան եւ պատեհ առիթով բնականաբար պիտի գործածուէին մեզի դէմ:

Անոնք միլիարդաւոր տոլարներու հասնող թալանի տէր դառցան, բայց Հայկական բանակը պահեցին Սերժ Սարգսեանի իսկ խոստովանութեամբ՝ 80-ականներու զէնքերով:

Փաշինեանի իշխանութեան 2 կարճ տարիներու ընթացքին, բացայայտուեցաւ հայկական բանակի զինուորներուն օրապահիկ ճաշի հաշուոյն հարստացած գեներալներու ահաւոր իրականութիւնը:

Փաշինեանի իշխանութեան 2 կարճ տարիներու ընթացքին, զինուորներուն որակաւոր ճաշ սկսաւ տրամադրուիլ:

Փաշինեանի իշխանութեան 2 կարճ տարիներու ընթացքին, բանակի սպառազինութիւնը մեծապէս աճեցաւ:

Բոլորի համար յստակ է, որ հայկական բանակը պատերազմեցաւ ոչ թէ միայն Ազրպէյճանի բանակին եւ ներմուծուած ահաբեկիչներու դէմ, այլ ՆԱԹՕ-ի երկրորդ մեծագոյն բանակը ունեցող Թուրքիոյ դէմ եւ 44 օրեր դիմադրեց, երբ հաշիւ եղած էր, որ այս պատերազմը միայն քանի մը օրուան հարց էր:

Երբ մեր կորուստի պատասխանատուները կը փնտռենք, հարկ է ի մտի ունենալ վերեւի գլխաւոր կէտերը, որպէսզի շինիչ քննադատութեամբ կարենանք մեր թերացումներուն հաշուարկը ընել եւ ըստ այնմ դասեր քաղել: Մեր դժբախտութիւնը հոն է, որ պատեհապաշտ ղեկավարներ ազգային շահը կը զոհեն իրենց սեպհական շահերուն համար, ազգը մատնելով կորուստներու: Անցնող 30 տարիներու ընթացքին, մեր մօտիկ անցեալի պատմութիւնէն օրինակներ բերելով, շատ մը անգամներ շեշտած ենք պատմութիւնէն դասեր քաղելու անհրաժեշտութիւնը, որպէսզի չկրկնենք անցեալի սխալները, բայց դժբախտաբար այս մոլութիւնն ալ մեր ազգային հոգեբանութեան բնորոշ գիծերէն մին ըլլալով, տուժած ենք եւ կը տուժենք: Այս մասին աւելի մանրամասն կ՛անդրադառնանք մեր յաջորդ յօդուածով:

******

Յ.Գ. Հաւանական է, որ մեր այս յօդուածը չարաշահուի տարբեր նպատակներով: Բայց մեր խորհրդածութիւնները անմիջապէս թուղթին կը յանձնենք, առանց սպասելու գալիք օրերու զարգացումներուն, հաստատ մնալով մեր համոզումին վրայ, որ անկեղծ ու անշահախնդիր երկխօսութեամբ միայն կարելի է հասնիլ ազգին շահաւէտ լուծումներու:

## Անյապաղ Նախաձեռնում եմ Քաղաքական Խորհրդակցութիւններ. Արմէն Սարգսեան

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէն Սարգսեան տարածեց հետեւեալ յայտարարութիւնը

Մամուլից տեղեկացայ, որ Ռուսաստանի եւ Ատրպէյճանի Նախագահների հետ ստորագրուել է Ղարաբաղեան պատերազմը դադարեցնելու մասին յայտարարութիւն: Մամուլից տեղեկացել եմ նաեւ պատերազմի դադարեցման պայմանների մասին:



ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան

Որպէս Հանրապետութեան Նախագահ այս փաստաթղթի վերաբերեալ ինձ հետ որեւէ խորհրդակցութիւն կամ քննարկում, ցաւօք, չի եղել, որեւէ բանակցութեան չեմ մասնակցել: Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը համազգային նշանակութեան եւ կարեւորութեան հարց է:

Հայաստանի, Արցախի, ողջ հայ ժողովրդի կենսական անվտանգային շահերին եւ իրաւունքներին առնչուող ցանկացած քայլ, գործողութիւն, ցանկացած որոշման ընդունում, առաւել եւս որեւէ փաստաթղթի ստորագրում պէտք է լինի համապարփակ խորհրդակցութիւնների եւ քննարկումների առարկայ:

Ընդգծում եմ, որ Արցախի, հետեւաբար՝ հայ ժողովրդի ճակատագիրը կարող է լուծուել միմիայն հաշուի առնելով մեր համազգային շահերն ու միմիայն համազգային կոնսենսուսի հիման վրայ: Հաշուի առնելով առկայ իրավիճակով պայմանաւորուած? ժողովրդի ստուար զանգուածի խոր մտահոգութիւններն, անյապաղ նախաձեռնում եմ քաղաքական խորհրդակցութիւններ՝ համազգային շահերի պաշտպանութեան մեր օրակարգից բխող լուծումներն ամենակարճ ժամկէտներում համաձայնեցնելու նպատակով:

Որպէս Հանրապետութեան Նախագահ, ազգապահպանութեան կարեւորագոյն այս պահին համազգային միասնութեան ձեւաւորումը համարում եմ իմ այժմէական առաջնահերթութիւնը:

Յուսով եմ, որ տասնօրեայ ժամկէտում բոլորիս կը յաջողուի ձեւաւորել այդպիսի միասնութիւն, որի պարագայում ես կը համարեմ, որ օգտագործել եմ հայրենիքիս ծառայելու հնարաւորութիւնները:

## Ժամանակն Է Եւ Պարտաւոր Ենք Դադարեցնել Արիւնահեղութիւնը, - Յայտարարեցին ՀՀ Պաշտպանութեան Նախարարութիւնը Եւ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտապը



Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը Եւ Զինուած Ուժերու գլխաւոր շտապը յայտարարեցին, որ ժամանակն է դադրեցնել արիւնահեղութիւնը, եւ կոչ կ՛ընեն զերծ մնալ գործողութիւններէ, որոնք կրնան խարխլել պետականութեան հիմքերը:

«Սեպտեմբերի 27-ին Արցախի դէմ սանձազերծուեց պատերազմ, որն աննախադէպ էր՝ ներգրաւուած ուժերի, միջոցների, սպառազինութեան քանակի ու տեսակի առումով: Այն աննախադէպ էր նաեւ այն տեսանկիւնից, որ մեր բանակը, փաստացի, կռւում էր ոչ միայն 10-ը միլիոնանոց Ատրպէյճանի զինուած ուժերի, այլեւ Թուրքիայի ռազմական անմիջական մասնակցութեան եւ լիարժէք ու անվերապահ քաղաքական, ռազմական ու դիւանագիտական աջակցութեան, ինչպէս նաեւ մի քանի հազար վարձկան-ահաբեկիչների դէմ:

Մեր բանակը, այս պայմաններում, արեց հնարաւորն ու անհնարինը՝ հակառակորդին դիմագրաւելու համար: Հայկական բանակի ամէն մի զինուոր, սպայ ու գեներալ Հայրենիքի պաշտպանութեան

Շար.ը էջ 6

# Նիկոլ Փաշինեան Շնորհաւորած Է ԱՄՆ Նորընտիր Նախագահ Ճօ Պայտընին




*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհաւորական ուղերձ յղած է Ամերիկայի Միացեալ Նահանգների նորընտիր նախագահ Ճօ Պայտընին:*

*Շնորհաւորական նամակին մէջ Փաշինեան համոզմունք կը յայտնէ, որ երկարամեայ քաղաքական ու օրէնսդիր գործունէութեան ընթացքին ձեռք յգած հարուստ փորձառութիւնը եւ գիտելիքները կ՚ուղեկցին Պայտընին՝ բարօրութեան եւ յառաջընթացի ճանապարհով Միացեալ Նահանգներն ու անոր ժողովրդը առաջնորդելու գործին մէջ:*

*Վարչապետն անդրադառնալով հայ-ամերիկեան յարաբերութիւններուն գրած է. «Ձեր գործունէութեան ընթացքում Դուք մեծ ներդրում էք կատարել հայ-ամերիկեան բարեկամութեան եւ փոխշահաւէտ համագործակցութեան ամրապնդման գործում: Հայ ժողովուրդը բարձր է գնահատում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ իր իրաւունքների պաշտպանութեան հարցում Ձեր կողմից ցուցաբերած սկզբունքային դիրքորոշումը:*

*«Հաւատացած եմ, որ Ձեր նախագահութեան ընթացքում հայ-ամերիկեան երկկողմ յարաբերութիւնները, որոնք խարսխուած են ընդհանուր ժողովրդավարական արժէքների վրայ, կը շարունակեն վերելք ապրել՝ մեր պետութիւնների միջեւ առկայ ռազմավարական երկխօսութեան մակարդակին համահունչ»:*

*Փաշինեանը յոյս յայտնած է, որ այդ գործընթացին մէջ իր անգնահատելի ներդրումը ունի նաեւ ամերիկահայութիւնը, որ կապող կամուրջ կը հանդիսանայ երկու երկրներուն միջեւ:*

*«Հայաստանը մեծապէս կարեւորում է ԱՄՆ-ի դերակատարումը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործում՝ որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ: Ինչպէս տեղեակ էք, աւելի քան մէկ ամիս է, ինչ Ատրպէյճանն ու Թուրքիան, արհամարհելով համանախագահողների՝ հրադադար հաստատելու բոլոր ջանքերը, շարունակում են համատեղ ագրեսիան Հայաստանի եւ Արցախի հանդէպ՝ ներգրաւելով օտարերկրեայ ահաբեկիչների:*

*«Այդ կապակցութեամբ ողջունում եմ խնդրի հանգուցալուծումը բացառապէս խաղաղ ճանապարհով լուծելու Ձեր տեսլականը, որն արտայայտել էք որպէս Նախագահի թեկնածու:*

*«Լիայոյս եմ, որ Ձեր վարչակազմը գործուն քայլեր կը ձեռնարկի պատերազմի դադարեցման եւ խնդրի համապարփակ կարգաւորման ուղղութեամբ, որի հիմքում պէտք է ընկած լինեն Արցախի ժողովրդի անվտանգութեան ապահովումը նրա ինքնորոշման իրաւունքի իրացման միջոցով:*

*«Թոյլ տուէք մէկ անգամ եւս շնորհաւորել Ձեզ՝ ԱՄՆ Նախագահի պաշտօնում ընտրուելու առթիւ եւ ցանկանալ քաջառողջութիւն, յաջողութիւն եւ արգասաբեր գործունէութիւն», - մասնաւորապէս, ըսուած է Փաշինեանի նամակին մէջ:*

## ՍԴՀԿ Կը Շնորհաւորէ Ամերիկայի Նորընտիր Նախագահ Ճօ Պայտընին

*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինը շնորհաւորական նամակ յղած է Միացեալ Նահանգներու նորընտիր նախագահ Ճօ Պայտընին:*

*Յարգելի Նորընտիր Նախագահ Ճօ Պայտըն,*

*Սրտանց կը շնորհաւորենք Ձեր յաղթանակը, որ է նաեւ յաղթանակ Ամերիկայի ժողովուրդին ու երկրի ժողովրդավարական հաստատութիւններուն եւ սկզբունքներուն:*

*Վստահ ենք որ, Ձեր կողքին ունենալով փոխ նախագահ Քամալա Հարրիսը պիտի կարողանաք յաղթահարել երկրի առջեւ ծառացած առողջապահական, տնտեսական եւ ընկերային մարտահրաւէրները:*

*Որպէս Ամերիկահայեր մենք ոգեւորուած ենք Հայ ժողովուրդի եւ Հայաստանի հանդէպ Ձեր ունեցած բարեկամական կեցուածքով եւ Լեռնային Ղարաբաղի տարածքին այս օրերուն տեղի ունեցող իրադարձութիւններուն նկատմամբ աւելի գործնական քայլերու դիմելու անհրաժեշտութեան մասին Ձեր յայտարարութիւններով:*

*Յոյսով ենք որ, Ձեր պաշտօնի ստանձնումէն ետք գործի կը դնէք Ամերիկայի հեղինակութիւնը եւ միջազգային կապերը, կասեցնելու համար Արցախի ժողովուրդի նկատմամբ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ ծաւալած նախայարձակ պատերազմը ու կանխելու՝ շարունակուող մարդկային աղէտը:*

*Յաջողութիւն կը մաղթենք Ձեզի՝ դժուարին առաքելութեան մէջ:*

***ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին***

***Նոյեմբեր 7, 2020***

## Պունտեսթակի Ընդդիմադիր Կուսակցութիւնը Կը Պահանջէ Արգիլել «Գորշ Գայլեր»-ու Գործունէութիւնը

*Պունտեսթակի ընդդիմադիր Ձախ կուսակցութեան պատգամաւոր Սեւիմ Տաղտելէնը հանդէս եկած է Գերմանիոյ տարածքին «Գորշ գայլեր» խմբաւորման գործունէութեան կասեցման պահանջով:*

*«Դաշնային կառավարութիւնը պէտք է անյապաղ հետեւի Ֆրանսայի օրինակին եւ արգիլէ այս երկրին մէջ «Գորշ գայլեր»ու հովանոցային կազմակերպութեան՝ Գերմանիոյ դեմոկրատական ազգայնական թրքական միութիւններու ֆետերացիայի (ADÜTDF) գործունէութիւնը»,-նշած է Ձախ կուսակցութեան պատգամաւոր Սեւիմ Տաղտելէնը:*

*Տաղտելէնը նշած է, որ քիւրտերու, հայերու, ալեւիներու, յոյներու եւ հրեաներու դէմ ատդրանքներ հրահրելով անոնք Գերմանիոյ մէջ կը ծառայեն հասարակութեան բեւեռացման եւ մասնատման: (ADÜTDF)-ը ծայրայեղ աջակողմեան, ծայրայեղ ազգայնական խոշոր կազմակերպութիւն է, տարբեր գնահատականներով ունի մօտաւորապէս 7 հազար անդամ:*

*«Թուրքիոյ մէջ «Գորշ գայլերը իշխանութեան դաշնակից գործընկեր՝ աջակողմեան թրքական կուսակցութեան՝ «Ազգայնական շարժման» հետ միասին սերտ կապեր ունին ահաբեկիչ նախագահ Ռեճէպ Թայյէպ Էրտողանի շրջապատին հետ: Իսլամիստական եւ ֆաշիստական կազմակերպութիւններու նկատմամբ պէտք է զէրոյական հանդուրժողականութիւն ըլլայ մեր երկրին մէջ: Ատոր համար պէտք է հետեւինք Ֆրանսայի օրինակին»,-աւելցուցած է Տաղտելէնը:*

*Ֆրանսայի ներքին գործոց նախարար Ժերալ Մուսա Տարմանէն 4 Նոյեմբեր 2020-ին յայտարարած է, որ Ֆրանսայի մէջ թրքական ծայրայեղ ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպութեան գործունէութիւնը պաշտօնապէս արգիլուած է:*

## Ճօ Պայտըն Ընտրուեցաւ

Շարունակուած էջ 1-էն

*Նեվատայի ընտրական ձայներուն եւ առաջ է Ճորճիայի եւ Արիզոնայի մէջ:*

*Ճօ Պայտընի ընտրութիւնը մեծ գոհունակութիւն յառաջացուց յատկապէս Եւրոպական մայրաքաղաքներու մէջ, որոնց ղեկավարները չուշացան շնորհաւորելու Նորընտիր Նախագահին:*

*Նորընտիր Նախագահին շնորհաւորեցին Հայաստանի վարչապետն ու Նախագահը:*

## Ժամանակն Է Եւ Պարտաւոր Ենք

Շարունակուած էջ 5-էն

*համար արեց առաւելագոյնը՝ անմնացորդ նուիրուելով այդ պայքարին ու կերտելով բազմաթիւ հերոսական պատմութիւններ: Այս պատերազմը մեզանից խլեց մեր լաւագոյն որդիներին, որոնց յիշատակը յաւերժ կը մնայ բոլորիս սրտերում՝ որպէս մեր ժամանակների իրական հերոսներիե, - ըսուած է յայտարարութեան մէջ:*

*«Ձեզանից իւրաքանչիւրը պէտք է վստահ լինի, որեւէ մէկի մօտ կասկածի նշոյլ անգամ չպէտք է լինի, որ մեր բանակն արել է հնարաւորն ու անհնարինը: Մենք եւս մէկ անգամ փաստեցինք, որ ունենք ոգով անկոտրում զինուորներ, սպաներ ու գեներալներ, որոնք պատրաստ են առանց վայրկեան անգամ մտածելու իրենց կեանքը զոհաբերել մեր սուրբ Հայրենիքի պաշտպանութեան համարե, - կը յայտարարեն Պաշտպանութեան Նախարարութիւնը եւ Գլխաւոր Շտաբը՝ «բայց ժամանակն է դադարեցնել արիւնահեղութիւնը: Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի քաղաքական ղեկավարութիւնները եկել են համաձայնութեան, որի բովանդակութեանն արդէն ծանօթ էք: Պատերազմը լիարժէք չի աւարտուել, եւ մարտական գործողութիւններն Արցախում դեռեւս շարունակւում են: Այդուհանդերձ, մենք պաշտպանում ենք եւ պարտաւոր ենք կատարել մեր երկրի ռազմաքաղաքական ղեկավարութեան որոշումները, որոնք կայացուել են իրադրութեան բազմակողմանի վերլուծութեան եւ գնահատականի հիման վրայ: Մենք պարտաւոր ենք կանգնեցնել արիւնահեղութիւնը: Մենք պարտաւոր ենք գտնել մեր բոլոր հերոսների մարմիններն ու նրանց, զինուորական պատուով, հողին յանձնել: Մենք պարտաւոր ենք փորձել սփոփել մեր հերոսածին մայրերի ցաւն ու բուժել վիրաւորների վէրքերը: Մենք պարտաւոր ենք վերականգնել մեր բանակի ներուժն ու առաւել ամրացնել այն՝ վերածելով գերժամանակակից ու գերմարտունակ մի բռունցքի: Մեր անելիքները չափազանց շատ են: Պատերազմն աւարտւում է: Բանակն իր անելիքն արել է եւ շարունակելու է անել անմնացորդ:*

*Կոչ ենք անում զերծ մնալ գործողութիւններից, որոնք կարող են խարխլել պետականութեան հիմքերը եւ, դասեր քաղելով գործած հնարաւոր բոլոր սխալներից, կերտել անհամեմատ ուժեղ ու մարտունակ բանակ, որին արժանի է մեր հերոսական ժողովուրդը»:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Հայաստանի Հանրապետութեան Նախագահի, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի Նախագահ Արմէն Սարգսեանի Ուղերձը

HAYASTAN ALL ARMENIAN FUND

*Սիրելի՛ հայրենակիցներ,*

*Աւելի քան մէկ ամիս է Արցախը, Հայաստանը, ողջ հայ ժողովուրդը հայրենական պատերազմ են մղում, պատերազմ՝ սանձազերծուած Ատրպէյճանի եւ Թուրքիայի կողմից, պատերազմ՝ նաեւ միջազգային ահաբեկչութեան դէմ:*

*Մեր քաջ զինուորականը եւ կամաւորականը կռւում են անձնուրաց, առանց իրենց կեանքը խնայելու:*

*Կռւում են յանուն ազատութեան եւ արժանապատուութեան, յանուն Հայրենիքի:*

*Խոնարհւում ենք մեր զոհուած հերոսների ու նրանց ընտանիքների առջեւ:*

*Իմ ցաւակցութիւնն եմ յայտնում բոլոր որդեկորոյս մայրերին ու հայրերին, իրենց ամուսիններին կորցրած կանանց, եղբայրներին կորցրած քոյրերին, թոռներին կորցրած տատիկներին ու պապիկներին...*

*Այս պատերազմում յաղթանակը մեզ համար նշանակում է պաշտպանել մեր տունը, մեր մշակոյթը, մեր արժէքները, մեր հաւատքը, նշանակում է նաեւ ամէն ինչ անել, որ չլինի երկրորդ ցեղասպանութիւն, նշանակում է նաեւ պատերազմ յանուն մեր հերոսների, մեր նահատակուած քաջերի յիշատակի...*

*Շուրջ 30 տարի առաջ սկսուած հայրենական պատերազմը շարունակւում է:*

*Ինձ յաճախ հարցրել են, թէ ինչպէ՞ս ենք կարողացել երկրաշարժից չբուժուած վէրքերով, աւերուած տնտեսութեամբ ու գրեթէ անզէն վիճակով 30 տարի առաջ յաղթել:*

*Գուցէ ոմանց մեր յաղթանակը իսկապէս անհնար էր թւում: Բայց ո՛չ մեզ:*

*30 տարի առաջ մենք չունէինք ուժեղ տնտեսութիւն, ճանապարհներ, վառելիք, չունէինք բաւարար քանակութեամբ զէնք:*

*Սակայն յաղթեցինք, որովհետեւ մենք ունէինք ամենահզօր զէնքը՝ մեզ, մեր միասնութիւնը: Այսօր էլ ոմանք ինձ հարցնում են, թէ ո՞րն է մեր այսօրուայ յաղթանակի երաշխիքը:*

*Իմ պատասխանը չի փոխուել՝ մեր միասնութիւնը:*

*Ուզում եմ յորդորել մեր քաղաքական ուժերին, քաղաքական եւ հասարակական գործիչներին՝ եղէ՛ք ժողովրդի պէս միասնական ու համախմբուած, հետեւէ՛ք ժողովրդի օրինակին...*

*Սիրելի՛ հայրենակիցներ,*

*Արցախի վրայ յարձակուած թշնամուց բացի մենք ունենք եւս մէկ թշնամի՝ կորոնավիրուսի համավարակը, որը ամէն օր կեանքեր է խլում:*

*Ցաւակցում եմ համավարակին զոհ գնացած մեր հայրենակիցների ընտանիքներին ու հարազատներին:*

*Կորոնավիրուսի դէմ պայքարում նոյնպէս, յաղթանակը կախուած է մեզնից՝ թէ որքան միասնական եւ համախմբուած, կազմակերպուած եւ կարգապահ կը լինենք...*

*Ցանկանում եմ իմ առանձնայատուկ շնորհակալութիւնը յայտնել այդ պայքարի առաջամարտիկներին՝ առողջապահութեան համակարգի բոլոր, բոլոր աշխատակիցներին՝ բժշկից մինչեւ բուժքոյր ու բուժեղբայր, մայրապետ ու սանիտար, շտապօգնութեան վարորդ եւ տեխնիկական աշխատակիցներ, որոնք օր ու գիշեր անձնուիրաբար պայքարում են կորոնավիրուսի դէմ:*

*Նրանք մէկ ուրիշ ճակատի առաջին գծում են...*

*Սիրելի՛ հայրենակիցներ Արցախում, Հայաստանում եւ Սփիւռքում,*

*Շնորհակալ եմ ձեր իւրաքանչիւր Ջանքի ու ձգտումի, ձեր սրտացաւութեան ու ջերմութեան, ձեր համախմբուածութեան ու կազմակերպուածութեան համար, ձեր օգնութեան համար:*

*Օգնութիւն, որ ցուցաբերում էք տարբեր ձեւերով ու միջոցներով:*

*Շարունակէ՛ք Ձեր աջակցութիւնը՝ նիւթապէս ու բարոյապէս, նուիրատուութեամբ ու բարեգործութեամբ, կապերով ու գիտելիքով, ձեր անմիջական մասնակցութեամբ կամ հեռաւոր ներկայութեամբ:*

*Ողջ հայութիւնը, գիտակցելով պահի լրջութիւնը եւ հայրենիքի շուրջ համախմբուելու հրատապութիւնը, անմիջապէս լծուեց Համահայկական հիմնադրամի աշխատանքներին, որը վերածուել է համազգային շարժման:*

*Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել բոլոր նուիրատուներին՝ Սփիւռքից եւ Հայաստանից:*

*Նուիրատուութիւն անելով «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ դուք աջակցում էք Հայաստանում ապաստանած արցախցի ընտանիքների, փախստականների խնդիրների լուծմանը, աւերուած դպրոցների ու տների վերականգնմանը:*

*Կոչ եմ անում Հայաստանում եւ համայն սփիւռքում բնակուող բոլոր հայ գործարարներին, բարերարներին, միութիւններին, կազմակերպութիւններին, անհատներին՝ անել առաւելագոյնը յանուն հայ ժողովրդի անվտանգութեան:*

*Մեր յոյսը մենք ենք եւ մեր իրական բարեկամները:*

*Միասի՛ն ենք կերտելու մեր յաղթանակը:*

*Աստուած պահապան Արցախին, Հայաստանին եւ մեր ողջ ժողովրդին:*

## Արաբական Աշխարհ

# Լիբանանի Մաքսատան Ղեկավարը Ձերբակալուած Կաշառակերութեան Համար



*Լիբանանի մաքսատան տնօրէնը Պատրի Տահէր, պաշտօնապէս ձերբակալուած է կաշառակերութեան եւ այլ յանցանքներու համար: Ինք թմրանիւթերով ամբաստանուած է եւ ապօրէն փոխադրութիւններ կատարող սէուտցի իշխանի մը Լիբանանէն ազատ ելք ունենալու արտօնութիւն տուած է կաշառքի փոխարէն: Արդարեւ իր այս ապօրէն արարքը միլիոնաւոր տոլարներու վնաս պատճառած է պետութեան գանձին:*

*Նշենք նաեւ որ Պէյրութի դատաւոր Շարպէլ Ապու Սամրան՝ Տահէրի դէմ իր ամբաստանագիրին մէջ կը յայտնէ թէ ենթական կամաւոր կերպով իր կատարած անտեսումներուն հետեւանքով պատճառ հանդիսացած է Պէյրութի նաւահանգիստի անցեալ Օգոստոսի զանգուածային պայթիւններուն, որով 200-է աւելի մարդիկ մահացան:*

*Ապու Սամրան իր այս որոշումն առած է իր կատարած հարցախոյզներու, հետախոյզ լրագրողի մը եւ այլ իրաւաբաններու զեկոյցներու հիման վրայ: Լիբանանի Պատկան իշխանութիւնները ներկայիս, կ՚ամբաստանեն Պէյրութի օդակայանին մէջ ցարդ յայտնաբերուած թմրանիւթերու ամենամեծ քանակի փոխադրութիւնը կատարողները: Այս առնչութեամբ Հոկտեմբերի 27ին ձերբակալուեցան սէուտցի իշխան Ապտէլ Մուհսին Պին Ուալիտ Պին Ապտէլ Ազիզը եւ չորս ուրիշներ: Օդակայանին մէջ ձերբակալուածները իրենց մասնաւոր օդանաւով պատրաստ էին փոխադրելու շուրջ 2 թոն captagon տեսակի թմրանիւթ եւ քոքային: Արդարեւ այս հարցով ամբաստանուած տասն անձերէն հինգն արդէն ձերբակալուած են (սէուտցի իշխան մը եւ 4 սէուտահպատակներ): Հինգ այլ անձեր փախստական վիճակի մէջ են (երեք լիբանանցի եւ երկու սէուտցի):*

*Կ՚ըսուի թէ վերոյիշեալ թմրեցուցիչները լայնօրէն օգտագործուած են Սուրիոյ մէջ, խթանելու համար կռուողները, յատկապէս գիշերային մարտերու ընթացքին:*

# Սուրիոյ Նախագահ Ասատի Մեղադրանքը Լիբանանի Դրամատուներուն Դէմ

*Դամասկոսէն ստացուած լուրերուն համաձայն, Սուրիոյ Հանրապետութեան նախագահ Պաշշար Ասատ, խումբ մը լրագրողներու առջեւ ելոյթ ունենալով, համառօտ կերպով խօսած է երկրի ապահովական ընդհանուր իրավիճակի մասին: Իսկ անդրադառնալով երկրի տնտեսական դրութեան ոչ ցանկալի կացութեան ուժգնօրէն մեղադրած է դրացի երկիրները, մասնաւորաբար Լիբանանի դրամատուները եւ անոնց որդեգրած սխալ գործընթացը, պատճառ դառնալով երկու երկիրներու տնտեսական կացութեան վատթարացումին:*

# Արաբական Միացեալ Էմիրութիւններու Մէջ Անձնական Ազատութիւնները Կ՚ընդարձակուին

Asspcoated press *գործակալութեան Տուպայի թղթակիցի լրատուութեան համաձայն, Արաբական Միացեալ Էմիրութիւնները անցեալ շաբաթ, յայտարարած են թէ մեծ բարեփոփոխութիւններ ներմուծուած են անհատի ազատութիւններու օրէնքի տարածման գծով: Ուստի, այսուհետեւ չամուսնացած զոյգեր կրնան միասին բնակիլ, ոգելից ըմպելիներու գործածութեան արգելքները մեղմացնել եւ պատուոյ ոճիրներու վերաբերեալ օրէնքները վերանայիլ:*

*Արդարեւ, անձնական ազատութիւններու վերաբերեալ որդեգրուած այս ընդարձակման քաղաքականութիւնը՝ կը նպատակադրէ զբօսաշրջիկներու եւ առեւտրականներու համար, ստեղծել արեւմտեան մթնոլորտ որ բարեկարգիչ դեր կ՚ունենայ եւ երկրի տնտեսութեան զարգացման վրայ:*

*Նշենք նաեւ որ այս քայլն առնուած է Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Իսրաէլի հետ յարաբերութիւններու բնականոնացման որոշումէն ետք, որով կ՚ակնկալուի որ զգալիօրէն զարկ պիտի տրուի զբօսաշրջիկութեան եւ ներդրումներու զարգացման գործի արդիւնաւէտութեան:*

*Բարեփոխուած նոր օրէնքերու ծիրէն ներս առնուած են նաեւ օտարահպատակներու ամուսնութիւններու, ամուսնալուծումներու եւ ժառանգութեան վերաբերեալ այլազան հարցերն Տակաւին կան բարեփոխութեան ենթարկուելիք շարք մը այլ օրէնքներ եւս: Այսուհանդերձ քաղաքական կուսակցութիւններն ու արհեստակցական միութիւնները ցարդ ապօրէն կը համարուին:*

www.massispost.com

# Դաւաճանին Պէտք Չէ Փնտռել, Նա Մեր Ազգի Մէջ է... (Կաին Շահնազարով)

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Արցախեան պատերազմի այս թէժ օրերին, սովորականից աւելի եմ նայում ռուսական «Ռոսիա-1» կայանի քաղաքական մեկնաբան Վլադիմիր Սոլովեովի հարցազրոյցները 5-6 քաղաքական գործիչների հետ, որոնց թւում, հիմնականում ներկայ է լինում մեր «հայրենակից», աշխարհահռչակ ՄՈՍՖԻԼՄ բաժնետիրական հսկայածաւալ տարածք զբաղեցնող ընկերութեան տնօրէն Կարէն Շահնազարովը:

Շահնազարովի նախնիները Լեռնային Ղարաբաղից են: Ժամանակին շատ յայտնի է եղել Շահնազարովների տոհմը, որը մշտապէս ծառայել է Ատրպէյճանի եւ Ռուսաստանի շահերին: Այդ տոհմի վերջին ներկայացուցիչը Կահէնի հայր Գէորգի Շահնազարովն է, որը ժամանակին եղել է Խորհրդային Միութեան վերջին նախագահ Գորբաչովի օգնականն ու խորհրդականը, ինչպէս նաեւ վերակառուցման քաղաքականութեան հեղինակներից մէկը:

Վլադիմիր Սոլովեովի վերջերս կայացած հարցազրոյցի ընթացքին Կահէն Շահնազարովը այնպիսի կրքոտ ելոյթ ունեցաւ ի շահ ազերիների, որ ապշեցրեց ոչ միայն մեզ՝ հեռուստադիտողներիս, այլեւ հենց իրենց՝ ազերի վերլուծաբան- քաղաքագէտներին:

Ի պաշտպանութիւն հայերի, երկու հրեայ քաղքագէտներ, Սոլովեովն ու Ժիրի-Նոսկին լաւագոյնս հերքեցին վա՞յ-քաղաքագէտ Շահնազարովի ձաբռտուքները: Սոլովեովն ասաց. «Ղարաբաղի տարածքում ոչ ոք եւ երբեք չի կարողացել յաղթել հայերին»: Իսկ Ժիրինովսկին, հին քարտէզներով «զինուած», փորձեց ապացուցել, որ Ղարաբաղի տարածքում հայերն ապրել են ամենահին ժամանակներից, երբ դեռ ռուս ազգը գոյութիւն չունէր երկրագնդի վրայ:

Այդ զզուելի հաղորդումը դիտելուց յետոյ, ես վստահ էի, որ ինչ որ մէկը, ինչ որ մի տեղ կ՚արձագանգի այդ հաղորդմանը: Եւ, օրերս դիմատետրի մէջ գտայ ոմն Իգոր Ահմետովի չափազանց ուշագրաւ, փաստերով լի երկարաւուն յօդուածը՝ կապուած վերոնշեալ՝ Սոլովեովի հարցազրոյցի հետ կապուած:

Ցետագայ գրառումս շաղախուած է իմ եւ Ահմետովի յօդուածից թարգմանաբար վերցուած հաւաստի տեղեկութիւններով:

Ցօդուածի հեղինակն ասում է, որ ինքը քրիստոնեայ թաթար է եւ դեռ ուսանողական տարիներից սերտ կապեր է ունեցել հայ ուսանողների հետ եւ լաւ գիտի հայոց պատմութիւնը: Նա գտնում է, որ հայերը շատ տաղանդաւոր են եւ խորը համոզմունք ունի, որ նրանք աշխարհի տարողութեամբ առաջընթաց են ապահովում գիտութեան, տեխնիկայի, մշակոյթի ոլորտներում: Սակայն,- ասում է նա,- առանձին դէպքերում որոշ հայեր իրենց բնօրրանից դուրս, տարբեր երկրներում իրենց շատ տարօրինակ են պահում՝ չասելու համար աւելի կոշտ բառեր:

Նախքան բուն՝ Շահնազարովի նիւթին անցնելը, մի քանի խօսք՝ Ռուսաստանի լրատուական միջոցներում հսկայական տեղ զբաղեցնող ծագումով հայ անձանց մասին, որոնք ի տարբերութիւն ազերի նշանաւոր քաղաքագէտների, գործում են ի վնաս հայերի: Ճիշդ է, ազերի «քաղաքագէտները» շատ անգամ անցնում են քաղաքակրթութեան սահմանները, իրականութիւնից անտեղեակ յիմարութիւններ դուրս տալով, բայց նրանք կատարում են Ատրպէյճանի կառավարութեան եւ Մոսկուայի դեսպանատան պատուէրը՝ իրենց այդ ձաբռտուքների տարածումն ապահովելով նաւթային դոլարներով ու սեւ խավիարով: Բայց նրանք գործում են ի շահ իրենց հայրենիքի:

Ատրպէյճանցին աչքերիդ մէջ նայելով ստում է: Սուտն այսօր պետական արժէք է նրանց մօտ: Սուտն ու ստելը Ատրպէյճանի մարտավարութեան լաւագոյն զէնքն է, մանաւանդ, եթէ այդ սուտը սփռւում է պետական մակարդակի հեռուստատեսային ալիքով, որը դիտում են միլիոնաւոր մարդիկ աշխարհի բոլոր անկիւններում, ըստ այնմ պատկերացում կազմելով երեւոյթների մասին:

Ռուսաստանում հայկական «խօսող գլուխների» մէջ, հայատեաց կեցուացքով աչքի են ընկնում RT («Ռուսաստանն այսօր») հեռուստակայանի գլխաւոր խմբագիր Մարգարիտա Սիմոնեանը եւ «Մոսֆիլմ»-ի տնօրէն Կահէն Շահնազարովը: Այս երկուսը ղեկավարում են ռուսական պետական քաղաքականութեան հզօր կառոյցի զոյգ օղակները: Թւում է թէ նրանք զտարիւն հայեր են եւ պիտի գործեն ի շահ Հայաստանի եւ Արցախի: Սակայն՝ բնաւ երբեք: Զզուանքի եւ արգահատանքի զգացումումով է լցվում հոգիդ, երբ լսում ես նրանց: Անախորժ զգացումը փոխունքի է առաջնորդում քեզ: Ոչ մի ռուս երբեք այնպէս չի պաշտպանում ռուսական պետութեան շահերը, ինչպես այս երկուսը, ինչպէս Ռուսաստանի հայերից ոմանք, որոնց հնարաւորութիւն է տրւում մօտենալ Սոլովեովի միկրոֆոնին:

Իսկ դա նման է հարազատին, արիւնակցին մէջքից դանակահարելուն: Կարծում եմ, լաւ կը լինի, եթէ նրանք ընդհանրապէս հրաժարուեն իրենց պատմական Հայրենիքում կատարուող իրադարձութիւնները լուսարձակի տակ առնելուց:

Ես մի անգամ արդէն խօսել եմ Մարգարիտա Սիմոնեանի եւ նրա անփառունակ ամուսնու՝Տիգրան Քէօսայեանի մասին, բայց՝ անօգուտ, նրանք մշտապէս լծուած են հակահայաստանեան պրոպագանդայի կառքին: Տեղին է յիշել ժողովրդական առածը, որն ասում է՝ «Խեւին խրատն ինչ կ՚անի, սեւին՝ սապոնը (օճառ)»: Բաւական է նայել Սիմոնեանի ղեկավարած «Ռուսաստանն այսօր» կենտրոնի հաղորդումները Արցախեան պատերազմի մասին համոզուելու համար, որ դրանք աւելի շատ ադրբեջանամետ են՝ քան հայամետ: Նրա հաղորդումներում ոչ մի խօսք եւ տեսագրութիւն չկայ գրեթէ հողին հաւասարեցուած Ստեփանակերտի մասին:

Նրա հաղորդումները նայելիս օտար հեռուստադիտողը կարող է եզրակացնել, որ Հայաստանն ու Ղարաբաղը գաւթիչներ են եւ պատերազմի հեղինակ, իսկ խեղճ, ապերջանիկ ազերիները պարզապէս ցանկանում են վերադարձնել «Ալլահի կողմից»

է՞ն գլխից իրենց վերապահուած հողերը: Այս ամէնից յետոյ, դժուար չէ եզրակացնել, որ Մարգարիտա Սիմոնեանը իր ժողովրդի դէմ է գործում:

Այժմ վերադառնանք «մեր ոչխարին»՝ Կահէն Շահնազարովին, որը Սոլովեովի հաղորդման ժամանակ բացեիբաց բարձրաձայնեց Ատրպէյճանի նկրտումները, աւելացնելով, որ «Ղարաբաղի եռեւից ընկնելով, հայերը կորցնելու են Ղարաբաղը...»: «Իշտահիդ քացախ»,- կ՚ասէր դարսեցի Հոռոմսիմ տատը:

Դու՝ պարոն Կահէն, Կրասնոդարում ծնուած, Բաքւում ապրած մարդ, ի՞նչ գիտես «քո» ժողովրդի պատմութեան մասին: Շատ լաւ է բնութագրել քո էութիւնը յօդուածագիր Իգոր Ահմետովը. «Նա, որպէս պատմաբան, քաղաքագէտ, վերծանող, լուսաբանող՝ զէրօ է»:

Իրարամերժ, շուրջիններին մօտ ժպիտ առաջացնող քո վերագրումներն ուղղուած Հայաստանին՝ հիմարութեան աստիճանի են հասնում: Դու, իբրեւ ծագումով հայ «քաղաքագէտ» թելադրում ես, որ Հայաստանը պիտի վերադարձնի գրաւեալ եօթ շրջանները: Դէ արի ու մի ասա,- ա՞յ տնաշէն, նախ դրանք գրաւեալ չեն, յաղթական պատերազմի արդիւնքում ազատագրուած, դարերով հայերին պատկանող հողեր են, որոնք ապահովութեան շրջան են կազմում Լեռնային Ղարաբաղի շուրջ: Դրանք յանձնելու պարագային, ապագային մի նոր դուռ կը բացուի ազերիների համար՝ մի նոր Ցեղասպանութիւն գործելու հայերի նկատմամբ: Այդ պարագան բնաւ նրան չի հետաքրքրում, բաւ է, որ իր Բաքուն ուրախ լինի:

Ցարգարժան պարոնը բացարձակապէս տեղեակ էլ չէ ռազմաճակատում տեղի ունեցող ընթացքից: Նա նոյնիսկ չի փորձել հաղորդմանը ներկայանալուց առաջ գէթ ճշդել թէ ինչ վիճակ է տիրում այդ պահին ռազմաճակատում: Նա տեղեակ չէր, որ հայերը օրհասական վիճակում չէին, հակառակը՝ ազերիներն էին ցայտնոտի մէջ, եւ որ այդ պահից երեւում էր, որ Ալիեւի եւ Էրտողանի պլանները ձախողութեան են մատնուած:

Իր գունաւոր ակնոցի տակ թաքնուած աչքերը ու լպիրշ ժպիտը արգահատանքի բացայայտ զգացում էր առաջ բերում շուրջիններին եւ միլիոնաւոր հեռուստադիտողների մօտ: Շահնազարովը ոչ մի խօսք չասաց Թուրքերի եւ սիրիական տեռորիստների մասին: Նա չյիշեց անգամ հայ ժողովրդի հերոսական պայքարի, Ղարաբաղի անկախացման մասին: Աւելին. նա կրքոտ, ամբարտաւան ոճով լռեցրեց փորձառու քաղաքագէտ, ազնիւ մտաւորական Վիտալի Տրետեակովին, ով իր խօսքում անհրաժեշտութիւն համարեց ճանաչել Ղարաբաղի անկախութիւնը: Դիտելով այս ամէնը, պարզապէս նողկանքի զգացումով է պատում ներաշխարհդ Մոսֆիլմի տիրակալի հանդէպ:

Երբ Շահնազարովը խօսում է Հայաստանի մասին, յստակ երեւում է, որ նա ջանք չի խնայում ազերի լսարանին դուր գալու համար: Զարմանալի չէ, որ նրա ելոյթները մեծապէս սիրուած ու տարածուած են Ատրպէյճանի դիմատետրային ցանցում: Որքա՞ն պիտի իջնել, ցածրանալ, որպէսզի քեզ գովերգի թշնամին: Կարգին մարդը այս ամէնից յետոյ պիտի որ ինքնասպան լինի:

Դաւաճանական գէնը նստած է Կահէն Շահնազարովի արեան մէջ, գալիս է իր հօրից՝ Գէորգի Շահնազարովից: Ժամանակին, Ղարաբաղի յ ատուկ կառավարման ղեկավար Արկադի Վոլսկին բացայայտ կերպով յայտարարել է, որ եթէ Գէորգի Շահնազարովը չլինէր, Ղարաբաղի հարցը կարող էր դրական որոշմամբ լուծուել Խորհրդային տարիներին:

Ի՞նչ արած, գուցէ որդին շարունակում է հօր դաւաճանական գործելաոճը սեփական ժողովրդի հանդէպ՝ հանուն նաւթահոտ դոլարի ու սեւ խավիարի: Նա պատրաստ է նոյնիսկ սողալ Ալիեւի ոտքերի առջեւ, եւ նոյնը խորհուրդ է տալիս անել հայերին: Հայերը դարեր շարունակ, եթէ պարտուել էլ են, պարտուել են հերոսաբար, առանց ծնկի գալու: Հիմա եկել է ժամանակը, որպէսզի հայերը ստիպեն Ալիեւին սողալ հայերի ոտքերի առջեւ ու կատարել այն պայմանները, որոնք օրինական գէտնի վրայ կը դրուեն նրա առջեւ:

Շահնազարովը այդպէս էլ չհասկացաւ, որ իր նախնիները, ինչպէս եւ ոչ մէկը, միշտ տուժել է թրքական քաղաքականութիւնից ինչպէս Հարաւային Կովկասում, այնպէս էլ Միջին Արեւելքում: Նրա նախնիները կոտորուել են թրքական սուիններով: Նրա հայրենակիցները մեր օրերում կոտորուել են Բաքւում եւ Սումգայիթում, իսկ հիմա հայ ժողովուրդը, որին իբրեւ թէ դու պատկանում ես, կեանքի ու մահուան կռիւ է մղում ադրբեջանա-թրքական զաւթիչների եւ միջազգային հրոսակախմբերի դէմ: Եւ այդ պայմաններում, ցանկացած համագործակցութիւն թշնամու հետ, ոչ միայն ամօթ է, այլ համազօր է զինուորական դաւաճանութեան:

Աւելին. եթէ սեւ խավիարի սիրոյն ու ոչ անքան մեծ հոնորարների, ուրիշ քաղաքագէտներ լռում են, խուսափում առաջադրուող հարցին ճշգրիտ պատասխան տալուց, Շահնազարովը մէջտեղ է նետւում, հեռանալով իրեն յատկացուած ամբիոնից ու մեծագոյն քաղաքագէտի հովեր առած, փորձում է քաղաքականութեան դասեր տալ, չմոռանալով վարկաբեկել Հայաստանին ու նրա ղեկավարութեանը: Կահէնի համար սովորական հոնորարը ոչինչ է: Նա մեծ քարտով է խաղում: Մեր աղբիւրների համաձայն, ադրբեջանական SOCAR նաւթային ընկերութիւնը Մոսֆիլմին փոխանցել է հսկայական գումար, որի զգալի մասը տեղաւորուել է Կարէն Շահնազարովի անձնական դրամապանակում:

Ի վերջոյ, ո՞վ է Կարէն Շահնազարովը:

Աւարտենք Իգոր Ահմետովի խօսքով.

- Դու՝ Ցուդա ես: Այն, ինչ անում ես՝սրբապղծութիւն է...

# Massis Weekly

Volume 40, No. 44 Saturday, NOVEMBER 14, 2020


# Armenia, Azerbaijan Sign Russia-Brokered Truce Deal

## Pashinyan Calls on Armenians to Stand United Against Those Who are Fishing in Muddy Waters

YEREVAN -- The leaders of Armenia, Azerbaijan, and Russia have signed an agreement to end six weeks of military conflict over Nagorno-Karabakh, triggering a political crisis in Armenia where angry protesters stormed government buildings and parliament.



The November 10 announcement of the Russian-brokered agreement to end the fighting between Azerbaijan and Karabakh came after Azerbaijani forces made major battlefield gains, including reports they were approaching Artsakh capital, Stepanakert.

Pashinyan first announced the trilateral agreement in a Facebook post, saying he had signed a statement with the presidents of Russia and Azerbaijan on the "termination" of the war as of 1 p.m. local time.

Pashinyan said the deal, which includes the long-term deployment of Russian troops to the region, was "the best possible solution for the current situation."

"I made this decision as a result of an in-depth analysis of the military situation and an assessment of the people who know it best," Pashinyan wrote.

Russian President Vladimir Putin said he believed the agreement "will create [the] necessary conditions for a long-term and full-fledged settlement of the crisis around Nagorno-Karabakh on a fair basis and in the interests of the Armenian and Azerbaijani people."

Artsakh president Arayik Harutiunyan, said he had agreed with Pashinyan to end hostilities "given the current dire situation" and to avoid even greater military defeats and losses.

Under the deal, Azerbaijan will keep territory in Nagorno-Karabakh and surrounding areas captured during the conflict. It also calls for Armenian forces to hand over some areas it held outside the borders of Nagorno-Karabakh, including the eastern district of Agdam and the western area of Kelbajar.

Armenians will also forfeit the Lachin region, where a crucial road connects Nagorno-Karabakh to Armenia. The agreement calls for a 5-kilometer wide area in the so-called Lachin Corridor to remain open and be protected by around 2,000 Russian peacekeepers.

Russia said later its troops had already been sent to the South Caucasus to be deployed for a peacekeeping mission in Nagorno-Karabakh.

The agreement also calls for Russian border services to monitor a new transport corridor through Armenia connecting Azerbaijan to its western exclave of Nakhijevan, which is surrounded by Armenia, Iran, and Turkey.

Thousands of people fled Nagorno-Karabakh in recent days to Armenia as the Azerbaijani forces were closing in on both Shushi and Stepanakert.

Azerbaijan's forces in recent weeks have also retaken several regions outside Nagorno-Karabakh that were controlled by Armenian forces.

Unhappy with the situation, several thousand angry protesters gathered in Yerevan in the early hours of November 10 after Pashinyan announced he had signed the cease-fire agreement, with mobs storming the government headquarters and parliament, ransacking offices and smashing windows in an outburst of anger.

Parliament Speaker Ararat Mirzoyan was injured in a mob attack and hospitalized, drawing a sharp rebuke from the government.

Dozens of men also tried to break into RFE/RL's bureau in Yerevan, calling the Armenian Service "traitors."

The Union of Journalist of Armenia and Armenia's ombudsman condemned the attacks and any threats against media.

Later in the morning the Armenian police formed cordons to protect government offices and the parliament building.

Meanwhile, President Armen Sarkissian's office said later on Tuesday that he was launching "political consultations" to build national unity and "coordinate…solutions arising from our agenda of protecting national interests."

Sarkissian said in a statement he had learnt about the agreement to end the fighting in and around Nagorno-Karabakh from the media.

**Continued on page 4**

# Armenian PM Congratulates Joe Biden on Winning Presidential Election





YEREVAN -- Armenian Prime Minister Nikol Pashinyan has congratulated Joe Biden on winning the United States presidential election, expressing a hope that the new administration in Washington "will take active steps to stop the war and bring about a comprehensive settlement" of the Nagorno-Karabakh conflict.

Still during his election campaign in October Biden publicly called on President Donald Trump to "get personally involved" to put an end to the ongoing hostilities in Nagorno-Karabakh and promised that under his administration the United States will lead an international diplomatic effort to end the fighting.

"As a candidate you have laid out a vision for the resolution of the conflict exclusively through peaceful means. I salute that vision," Pashinyan wrote in his congratulatory message disseminated by his office on Sunday.

"I am hopeful that your Administration will take active steps to stop the war and bring about a comprehensive settlement of the conflict based on safeguards providing for the security of the people of Artsakh [the Armenian name for Nagorno-Karabakh] through the exercise of its right to self-determination," the Armenian premier added.

The head of the Armenian government stressed that Yerevan "deeply values the role that the United States plays in the peaceful resolution of the Nagorno-Karabakh conflict as a Co-

**Continued on page 4**

# SDHP Congratulates President-Elect Joe Biden

The Social Democratic Hunchakian Party's Western U.S.A. Executive Committee has sent the following congratulatory letter to the newly elected President Joe Biden.

Dear President-elect Jo Biden,

We congratulate you on your victory in the US presidential elections. This is a victory for the American people and the democratic institutions and principles of the country.

We are confident that with Vice President Kamala Harris by your side, you will be able to overcome the health, economic, and social challenges facing the country.

As American-Armenians, we are encouraged by your friendly positions towards the Republic of Armenia, and by your statements about the need to take more effective steps in response to current events in Nagorno-Karabakh.

We believe that after taking office, you will use American influence and international relations to stop the war ignited by Azerbaijan and Turkey against the people of Karabakh and to prevent the ongoing humanitarian disaster.

We wish you success in your difficult mission.

**SDHP Western America Governing Body**
**November 7, 2020**

# Russian Mi-24 Shot Down in Armenia Near the Border with Azerbaijan



MOSCOW, (TASS) — A Russian Mi-24 helicopter was shot down from a portable anti-aircraft missile system (MANPADS) over Armenia near the border with Azerbaijan, two crew members were killed and another was wounded. This was reported on Monday by the Russian Ministry of Defense.

"On November 9, at about 17:30 Moscow time, while escorting a convoy of the 102nd Russian military base through the territory of the Republic of Armenia in the air space near the Armenian settlement of Yeraskh near the border of the Nakhichevan Autonomous Republic (Republic of Azerbaijan), the Russian Mi-24 helicopter was subjected to fire from the ground from MANPADS. As a result of the missile hit, the helicopter lost control and fell in a mountainous area on the territory of Armenia," the Russian military department reported.

"Two crew members were killed, one was evacuated with moderate injuries to the home base," the Defense Ministry added.

As specified in the ministry statement, the command of the 102nd Russian military base is investigating who exactly shot down the helicopter. The Mi-24 was shot down in the air over the territory of Armenia outside the combat zone, the RF Ministry of Defense said.

Earlier, the Ministry of Emergency Situations of Armenia reported that a Russian helicopter crashed in the mountains near the village of Yeraskh near the border with Azerbaijan.

Later in the day, Azerbaijani Foreign Ministry issued a statement, saying that the downing of the Russian Mi-24 helicopter near Armenia's border with the Azerbaijani exclave of Nakhijevan was "by mistake" and was conditioned by the ongoing clashes with Armenian forces in Nagorno-Karabakh.

Azerbaijan has apologized to Russia over what it described as a "tragic accident" and added that it was prepared to pay compensation.

# Russia Possesses Precise Data on Terrorist Fighters in Karabakh

MOSCOW — Russia possesses precise data about terrorist fighters from the Middle East involved in the ongoing conflict in Nagorno-Karabakh, the country's top intelligence official has said.

In an interview with RIA Novosti conducted by Russia Today news agency director-general Dmitry Kiselyov this week, head of the Russian Foreign Intelligence Service Sergey Naryshkin also said that Moscow sees "separate elements of Turkish intelligence work" in the conflict zone.

Since the outbreak of hostilities in late September Armenia has insisted that Islamist mercenaries from Syria and elsewhere in the Middle East have been recruited by Turkey to fight on Azerbaijan's side against Nagorno-Karabakh.

Late last Artsakh Defense Army captured at least two Syrian fighters in the battlefield. They showed videos of interrogations of the two men who admit they had been recruited by Turkey to fight for Azerbaijan.

According to Naryshkin, Russia got its information about the presence of terrorist fighters in Nagorno-Karabakh from various sources in the Middle East and elsewhere in the region.



"We have been receiving these data from a number of countries, from different sources and from our different partners, partner services in the Middle East," he said.

In an interview with the Russian Kommersant daily earlier this week Russian Foreign Minister Sergei Lavrov said that the number of mercenaries from the Middle East in Nagorno-Karabakh was approaching 2,000.

# Armenian Congressional Caucus Statement on the Nagorno Karabakh Peace Deal

WASHINGTON, DC – The Armenian Congressional Caucus, including Congressman Frank Pallone, Jr. (NJ-06), Congressman Gus Bilirakis (FL-12), Congressman Adam Schiff (CA-28), and Congresswoman Jackie Speier (CA-14), issued the following statement on the Nagorno Karabakh Peace Deal:

"As Co-Chairs of the Congressional Caucus on Armenian Issues, we offer our deepest condolences to the people of Armenia and Artsakh. They bravely defended their homeland against Azerbaijan and Turkish-backed foreign mercenaries, facing devastating drone attacks, and enduring atrocities committed by Azeri forces. We stand with Armenia and Artsakh and reaffirm our continued support for Armenia's democratic government and Artsakh's right to self-determination.

We are deeply disappointed in the failure of the United States to play a productive role in avoiding this tragic outcome. Since the beginning of the Azeri offensive on September 27, 2020, we have called on the Administration to use all available resources to hold Turkey and Azerbaijan accountable. If the Administration had acted in a determined fashion to achieve a ceasefire and used levers like withholding military aid, reinstating Section 907 of the Freedom Support Act and sanctions, thousands of lives could have been saved and a return to peaceful negotiation would have been possible.

As we study the agreement announced yesterday, we will redouble our efforts to support Armenia and Artsakh against Azerbaijan and Turkey's outrageous hostility and to hold all those who committed atrocities against civilians in recent weeks accountable. The United States must not continue to passively ignore the threat Turkey poses to the stability of the Eastern Mediterranean, the Middle East, and the Caucuses."

# ACA Continues to Stand with Armenia and Artsakh

The Armenian Council of America expresses deep concerns regarding the agreement reportedly signed by Russia, Azerbaijan and Armenia. We stand united with our brethren in Armenia and Artsakh, and all Armenians around the world.

At this difficult time it is vital we remain focused on advocating for the recognition of Artsakh, the self-determination of the citizens who exercised their legal right to independence, and the preservation of Armenia's and Artsakh's democratic institutions. Armenia and Artsakh must continue to develop democratically, and no external or internal force must obstruct the democratic process. The United States should play a leadership role in aiding Armenia and the Armenian people, who have been ravaged by the immense toll of the war crimes perpetrated against them.

Over the last 44 days, Azerbaijan, Turkey and ISIS mercenaries from the Middle East, have committed war crimes on Artsakh civilians and prisoners of war. We call on the United States government to condemn these barbaric acts and to fully enforce Section 907 of the Freedom Support Act, and impose military and economic sanctions on both Azerbaijan and Turkey for expanding the Turkish terrorist network into the Caucasus.

The United States must direct the OSCE-led peace process, and we urge the inclusion of the duly elected Artsakh government as a equal partner in upcoming negotiations and in any final peace agreement.

Armenian Americans must continue to be engaged with our elected representatives to ensure that our voices are heard.

# Gaidz Youth Organization Announcement

GLENDALE -- On November 10, 2020, a concerning agreement was signed by Armenia, Russia, and Azerbaijan which put an end to the war in Artsakh. The global Armenian community is affected by the news and we stand with our brethren in Armenia, Artsakh and the Diaspora.

During the past 44 days, the world remained silent while a modern-day genocide that was taking place against the indigenous Armenians of Arstakh. This silence was tantamount to siding with the dictatorial governments of Azerbaijan and Turkey. This silence also rewarded mercenaries and ISIS jihadist who were utilized by Turkey and Azerbaijan. Turkey, a NATO member lent, and utilized U.S. military weapons against the peaceful population of democratic Artsakh. In addition, countless war crimes were committed against the civilians of Artsakh. Yet the international community stayed silent or utilized false equivalency, weakening international, humanitarian, and environmental laws. A result of the international community's silence, a dictatorial regime, backed by jihadists and an authoritarian warmongerer won against the democratically elected governments of Armenia and Artsakh, weakening democracy everywhere.

We call on the United States government to condemn these war crimes and fully enforce Section 907 of the Freedom Support Act. In addition, due to their use of terrorist and war crimes, we call for military and economic sanctions on both Azerbaijan and Turkey.

The United States must not only direct the OSCE-led peace process but must also recognize Artsakh as a participant stakeholder and as an independent State.

Lastly, it is vital the Armenian community continue advocating for an independent and globally recognized democratic Artsakh.

# Armenia Wants a Sustainable Peace. It Needs the International Community's Help

BY ARMEN BAIBOURTIAN



The world's first Christian nation and a modern democracy is currently facing an existential threat — one that should not exist in the 21st century. A NATO ally of the United States is prominently involved. The problem is, they are on opposite sides.

Right now, the life of the entire Armenian population in Artsakh (Nagorno-Karabakh) is imminently endangered, as Azerbaijan, directly aided and abetted by its ally Turkey, has launched a large-scale attack on Artsakh. Since the first day of the aggression, the Azerbaijani armed forces have targeted and bombarded civilian settlements and infrastructures, including churches, schools and hospitals.

To ensure lasting peace in the region and for the people of Artsakh, we need support with respect to several critical objectives: securing international recognition for an independent Republic of Artsakh, and using diplomatic tools, including sanctions, by the United States and the other co-chairs of the OSCE Minsk Group, to force Azerbaijan and Turkey to stop the hostilities, to abide by the ceasefire agreements, and to reject the use of force for achieving their goals.

To understand the calls of the Armenian-American community for lasting peace in Artsakh, it is important to comprehend the history of the region. Artsakh, also known by its Soviet name, Nagorno-Karabakh, is indigenous to ethnic Armenians for thousands of years. An early cradle of Christianity and home to the very first Armenian school teaching the Armenian alphabet, Artsakh today is a modern democracy and a de facto state with its own president, legislature and self-defense force. It has been vying for self-determination since the fall of the Soviet Union.

Nagorno-Karabakh was transferred as an autonomous region to the Azerbaijan Soviet Socialist Republic by the arbitrary decision of Joseph Stalin in 1923. Due to years of ethnic oppression, the people of Artsakh made peaceful calls for self-determination in 1987-88. These peaceful petitions were not only rejected by the Azerbaijan SSR, but also accompanied by violent pogroms and ethnic cleansing in Sumgait in 1988 and in Baku in 1990. In response, Artsakh held a referendum and legally declared its independence from the USSR in 1991, in line with the provisions of the Soviet constitution. Thus, Nagorno-Karabakh was never a part of independent Azerbaijan. After two years of fighting, the Armenian forces prevailed, and a ceasefire agreement was signed in 1994.

Since then, the United States, Russia and France have co-chaired the Organization for Security and Co-operation in Europe (OSCE) Minsk Group, helping us work toward a long-term peaceful solution. The recent events and the Azerbaijani violation of three ceasefire agreements brokered by the OSCE Minsk Group co-chair members — with the last one directly brokered by U.S. Secretary of State Mike Pompeo — demonstrate that Azerbaijan is not willing to play by the rules.

"Remedial recognition" of the independence of Artsakh and thus its people's right to self-determination in line with international law gives a hopeful path to ending the bitter war launched against the Armenian people, to securing lasting peace for Artsakh and Armenia, and to saving lives of innocent men, women, and children. By legitimizing the Republic of Artsakh within the international community, the focus can move toward creating the necessary mechanism and infrastructure for the peaceful co-existence of Artsakh and Azerbaijan. At that point, the independent Republic of Artsakh can come to the table to make a lasting deal without being under threat.

Turkey is a member of NATO, which is a complicating factor. However, I don't think many Americans are aware that the Turkish military has clandestinely deployed American-made F-16 fighter jets in Azerbaijan to conduct operations against Artsakh and Armenia. Turkey recruited and transported thousands of jihadist mercenary terrorists from Syria and Libya to Azerbaijan in order to fight against the Armenians. Turkish President Erdogan publicly threatened to finish the Armenian Genocide that was committed in Ottoman Turkey in 1915.

Nobody is willing to work harder to create a lasting peace in Artsakh than Armenia. But we need the rest of the world to make sure Azerbaijan and Turkey play by the rules as well.

Ambassador Armen Baibourtian is the Consul General of Armenia in Los Angeles.

Ձեր ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net
626-797-7680

# We Have the Most Powerful Weapon: Ourselves and Our Unity. Address by President Armen Sarkissian

HAYASTAN
ALL ARMENIAN
FUND

YEREVAN -- President Armen Sarkissian has called on Armenian political parties and public figures to show unity in the face of an ongoing armed conflict in Nagorno-Karabakh and a spike in the number of coronavirus cases, both of which have claimed hundreds of human lives.

"Be united like our people is. Follow the example of our people," Sarkissian said in his address on November 6.

The Armenian president said that unity was the most powerful weapon of Armenians that helped the newly independent nation prevail in the early 1990s when it had a ruined economy and was grappling with the consequences of a devastating 1988 earthquake in Spitak.

"Thirty years ago we had no strong economy, no roads, no fuel, we hadn't enough weapons. But we won because we had the most powerful weapon, ourselves, our unity. Some people ask me today what the guarantee of our today's victory is. And my answer hasn't changed – it's our unity," he said.

Sarkissian said that besides the war in Nagorno-Karabakh Armenia is also combating another enemy – the coronavirus pandemic, which has claimed the lives of more than 1,500 in the South Caucasus country of some 3 million people to date.

"Victory over coronavirus also depends on us, on how united, organized and disciplined we are," the president said.

Sarkissian, who chairs the Board of Trustees of the Hayastan All-Armenian Fund, also called on all businessmen, philanthropists and organizations in Armenia and its far-flung Diaspora to donate as much as possible to the charity.

"Making donations to the Hayastan All-Armenian Fund you help families from Artsakh [the Armenian name for Nagorno-Karabakh] who have taken refuge in Armenia, help solve the problems of refugees, help rebuild destroyed schools and houses," Sarkisian said.

"We place our hope on ourselves and our true friends. We will be creating our victory together. God bless Artsakh, Armenia and our entire nation," the Armenian president concluded.

# Turkey Claims "France is Completely Dependent on Armenian Circles"

ANKARA -- The Turkish Foreign Ministry on November 4 criticized France's move to ban Turkish ultra-nationalist Grey Wolves group, accusing it of "becoming completely captive of the Armenian circles," and saying that France ignores "the rising incitement of the fanatical Armenian diaspora" within its borders, as well as threats and attacks targeting Turkish people and diplomatic missions in recent months.

According to the ministry, "the provocative and hypocritical decision of the French government was reminiscent of the country's bad record in fighting terrorist organizations groups, including, in particular, the ASALA group, which killed Turkish diplomats, as well as the PKK and Fetullah Terrorist Organization (FETO), which have received protection and support from France".

Official Ankara also claims that the Gray Wolves organization does not exist at all, and the decision of the French government is "imaginary, hypocritical and provocative" in nature.



# Official Text of Nagorno Karabakh Armistice

The Armenian Prime Minister's Office has published the official text of the statement signed by Prime Minister of the Republic of Armenia Nikol Pashinyan, the President of the Republic of Azerbaijan Ilham Aliyev and the President of the Russian Federation Vladimir Putin on ending the war in Nagorno Karabakh.

"Statement by the Prime Minister of the Republic of Armenia, the President of the Republic of Azerbaijan and the President of the Russian Federation

10.11.2020

We, Prime Minister of the Republic of Armenia Nikol Pashinyan,
President of the Republic of Azerbaijan Ilham Aliyev,
and President of the Russian Federation Vladimir Putin state the following:

We hereby declare that a complete ceasefire shall be established and all hostilities shall be stopped in the Nagorno-Karabakh conflict zone as of 00:00 Moscow time on November 10, 2020.

The Republic of Azerbaijan and the Republic of Armenia, hereinafter referred to as the Parties, shall remain at their current positions.

Aghdam region shall be returned to the Republic of Azerbaijan until November 20, 2020.

Peacekeeping troops of the Russian Federation shall be deployed along the line of contact in Nagorno-Karabakh and along the Lachin corridor, including 1,960 servicemen with firearms, 90 armored personnel carriers, 380 units of motor vehicles and special equipment.

The peacekeeping troops of the Russian Federation are being deployed in parallel with the withdrawal of the Armenian armed forces. The peacekeeping troops of the Russian Federation shall stay there for a period of 5 years, with automatic extension for the next 5-year periods, if none of the Parties declares of its intention to terminate the application of this provision 6 months before the expiration of the preceding period.

A peacekeeping center shall be deployed to monitor the ceasefire with a view to increasing the effectiveness of control over the implementation of the agreements reached by the Parties to the conflict.

The Republic of Armenia shall return the Kelbajar region to the Republic of Azerbaijan by November 15, 2020, and the Lachin region by December 1, 2020. The Lachin corridor (5 km wide), which will provide for communication between Nagorno-Karabakh and Armenia and at the same time will not affect the city of Shushi, shall remain under the control of the peacekeeping troops of the Russian Federation.

The Parties have agreed that a plan for the construction of a new route along the Lachin corridor shall be determined within the next three years, providing communication between Nagorno-Karabakh and Armenia, with the subsequent redeployment of Russian peacekeeping troops to protect this route.

The Republic of Azerbaijan shall guarantee traffic safety for citizens, vehicles and goods in both directions along the Lachin corridor.

Internally displaced persons and refugees shall return to Nagorno-Karabakh and adjacent areas under the control of the Office of the UN High Commissioner for Refugees.

An exchange of prisoners of war, hostages and other detained persons and bodies of the dead is to be carried out.

All economic and transport links in the region shall be unblocked. The Republic of Armenia guarantees the safety of transport links between the western regions of the Republic of Azerbaijan and the Nakhichevan Autonomous Republic with a view to organizing the unimpeded movement of citizens, vehicles and goods in both directions. Control over transport communication is exercised by the Border Guard Service bodies of the FSS of Russia.

The Parties agree that the construction of new transport communications linking the Nakhichevan Autonomous Republic with the western regions of Azerbaijan shall be provided."

# OPINION:

## The Rise and Fall of President Donald J. Trump

BY KEVORK KEUSHKERIAN

Donald Trump entered the American political arena in 2016 as an outsider with a platform to cleanse Washington from "Do Nothing" politicians who had long served their own interests and personal gains.

He beat the 16 other Republican contenders, including seasoned senators, governors and other politicians, and became the nominee of the GOP. He inspired and gained the loyal support of the vast majority of Americans tired of the "Politics as Usual" attitude in the corridors of Congress. He brought a breath of fresh air with his famous theme "America First" and "Make America Great Again."

People believed in Donald Trump and voted for him, expecting wonders and prosperity for all Americans. However, four years later, their high hopes were shattered and their crystal clear image of him as the "People's President" was blurred for the following understandable reasons:

He alienated most of America's European allies by bluntly asking them to contribute their fair shares towards funding of NATO. Otherwise, he threatened to break up that long standing alliance.

He continued frustrating European political leaders when he went against Europe's adopted policies of fighting for "Global Warming" when he chose to abandon the Paris Climate Accord. He did not believe in the scientific consensus, arguing that the agreement was unfair to the United States.

He abolished NAFTA, calling it "the worst trade deal ever made." He created the USMCA, which supposedly is good for the American worker. Canada's Prime Minister, however, refused to attend the formal celebration of this new trade deal at the White House, thus, insulting the President of the United States.

He fired many of his original cabinet members and advisors, including Defense Secretary General Mattis, several Chiefs of Staff, Secretary of State Rex Tillerson, and so on, because they would not go along with many of his policies and attempts at reform.

He disgraced the office of the President of the United States of America by having expletive-filled campaign rallies, degrading his political and media adversaries with insulting names, (e.g. "Pocahontas," "Sleepy Joe," and "Crazy Nancy") and frequent use of mean-spirited slogans, such as the now infamous and widely-adopted "Fake News."

He again angered our European allies by pulling out of the previous administration's nuclear deal and then placing unilateral, renewed sanctions against Iran.

His handling of the Covid-19 pandemic was unsatisfactory, as he did not believe in the scientific facts presented to him by a panel of expert scientists and made many inaccurate predictions about the virus "going away soon" or "rounding the corner."

After four years, many Americans felt that he only cared for his base and ignored the vast majority of the people that had not elected him into office.

His constant tweeting, often in vulgar language, to those who did not agree with him made him persona non grata for many of his antagonists in Washington D.C.

He promised to drain the swamp, but instead the Washington D.C. swamp drained him. Take for example, his impeachment over his phone call with the President of Ukraine.

Finally, he polarized the country, failing to address the root causes of the unending riots, looting, and even murder of his own supporters all across America.

In the end, people were disenchanted with President Donald J. Trump, both personally and professionally, and thus, elected Vice President Joe Biden as the 46th President of the United States of America. Thus, President Trump became a one term President.

# Armenia, Azerbaijan Sign

Continued from page 1

"Unfortunately, there were no consultations or discussions with me, as the President of the Republic, regarding this document, and I did not participate in any negotiations," he said, insisting that the signing of such an important document involving Armenia's "vital security interests" and the "whole Armenian nation" should have been subjected to "comprehensive consultations and discussions."

In his comments following the night of chaos, Pashinyan implied that corruption in previous governments was also to blame for the current situation.

"We must prepare for revenge. We haven't dealt properly with the corrupt, oligarchic scoundrels, those who robbed this country, stole soldiers' food, stole soldiers' weapons," said Pashinyan, a reformist pressing an anti-corruption campaign who came to power in 2018 in the wake of mass popular protests.

"I call on citizens with dignity to be ready for us going after the rioters and their bosses, after the corrupt part of Dashnaktsutiun, after the robbers from the Republican Party, the Prosperous Armenia Party, the deserters from the Hayrenik party who left their combat positions and fled, and must be tried for desertion," he charged.

Meanwhile, Armenia's Defense Ministry and the General Staff of the Armed Forces issued a statement, calling on all to refrain from actions that could "undermine the foundations of [Armenia's] statehood."

# Armenian PM Congratulates Joe Biden

Continued from page 1

Chair of the OSCE Minsk Group."

"As you are aware, for over a month now, Azerbaijan and Turkey with the use of foreign terrorists have been fighting a war of aggression against Armenia and Artsakh in defiance of all efforts of the Co-Chairs to establish ceasefire," Pashinyan emphasized.

In his message to President-elect Biden the Armenian premier also said that he was convinced that "the wealth of experience and wisdom that you gained through your distinguished career in politics and legislature will guide you well as you lead the United States and its people on the path toward continued progress and prosperity."

"Throughout your service, you have made great contributions to the strengthening of the U.S.-Armenia friendship and mutually beneficial relationship. The Armenian people appreciate your principled stance on the recognition of the Armenian Genocide, and your support for the pursuit of their fundamental rights.

"Bilateral relations between Armenia and the United States are built on shared democratic values. I am convinced that our cooperation will continue to flourish during your presidency, consistent with the level of the strategic dialogue that underlies the relationship between our two nations.

"That process, of course, benefits from the invaluable role that the Armenian American community plays, acting as a bridge between our countries," Pashinyan said, wishing President-elect Biden "continued good health, and a successful and fruitful term in office."

# Բառերու Խորհրդաւոր Աշխարհը
# ՃԱԿԱՏ



ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Հայկական լեզուաշխարհը ունի բազմաթիւ լուսաւոր բառեր, որոնք հպարտութիւն կը բերեն հայոց մայրենիին: Անոնց մէջ, սակայն, կայ բառ մը, որ մէկ ճակատ բարձր է բոլորէն ու միշտ ճերմակ կը պահէ հայու ճակատը: «Ճակատ» բառն է ան: Որպէս մեր հնագոյն գոյականներէն մէկը, ան դեռ նախամաշտոցեան օրերէն եղեր է հայրենանուէր եւ անձնազոհ: Ճգնաժամային այս օրերուն, յարգելի ընթերցող, երբ հայը կը ճակատի իր գոյատեւման համար, պարծենանք այդ բառով: Իսկ անոր լեզուական ոդիսականը բացայայտելու համար արտօնեցէք մտաբերեմ դէպի հայրենիք ամառ մը առաջ կատարուած դպրոցական պտոյտին այն օրը, երբ այցելեցինք Եռաբլուրը եւ Չարենցի կամարը:

Շատ հեռու չէր Եռաբլուրը մեր պանդոկէն: Քառասուն ճերմակ մեխակ գրկած մտանք այդ սրբավայրէն ներս: Պատրաստ էինք երկու քերթուած արտասանելու: Ճակատը համբուրելի տղաներու վերջին հանգստավայրի մէջ աշակերտները սարսափով նկատեցին, թէ տարիքով ինչքան մօտիկ էին իրարու: Ապա բոլորը, սեւ մէկ քարի շուրջ բոլորուած սկսան արտասանել նահատակ որդիի մը համար գրուած ամենէն սրտաճմլիկ բանաստեղծութիւնը՝ Դանիէլ Վարուժանի «Առկայծ ճրագ»ը: Երկրորդ տան մէջ կուրծքերը ուռեցան ու բոլորը լսին. «Հա՛րս, վառէ՛ լոյսը ճրագին: / Տղաս կու գայ ճակատն հպարտ դափնիով»: Աղջիկները կարծեցին, թէ իրենք էին այդ հարսը, իսկ տղաները՝ թէ իրենք էին դափնիով պսակուած հերոսը: Մեխակները խոնարհեցան...

«Ճակատ» բառը Ոսկեդարուն վայելուչ մուտք գործեց գրաւոր հայերէն: Ո՛չ թէ միայն ունեցանք «առճակատիլ, ճակատագիր, ճակատահար» բառերը, այլ նաեւ՝ մարտ եւ հերոսութիւն բուրող բառեր, ինչպէս՝ «կռուաճակատ, ճակատամարտ, ճակատամարտիկ»: Այս ցանկին մէջ պէտք է ներառել նաեւ՝ «լայնաճակատ» ածականը, որ յարմար է նահատակներու ճակատը յարդարելու համար:

Բառս իր ճակատը բարձրացուց նաեւ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան մէջ: Հոն տեղ գտան՝ «ճակատամարտ, ճակատել, ճակատացուցանել» բառերը, «ճակատ առ ճակատ» եւ «ճակատ յարդարել» դարձուածքները: Յիշել կ'արժէ, թէ «ճակատ յարդարել» բուն չէ նշանակած ոսկիներ կամ ուլունքներ դնել ճակատի վրայ, այլ՝ «կարգել զզօրն ընդդէմ թշնամեաց. 'ի ճակատ հանել»: Նոյն շրջանին, երբ լուսաճակատ գրիչներ իրենց խուցերուն մէջ կ'ընթօրինակէին մատեաններ, ունեցանք «ճակատ գրոց»ը, այսինքն՝ գիրքի մը անուանաթերթը: Այսօր ճակատ բառը մեզի շնորհած է յիսունի չափ բառ եւ քառասունի չափ դարձուածք, որոնց մեծամասնութիւնը կը խօսի մարդու նկարագրի մասին, ինչպէս՝ «ճակատը բաց», «ճակատը դէմ տուող», «ճակատը պարզ» ու «ճակատով մարդ»:

Վերադարձանք հանրաշարժ: Այցելութեան յաջորդ վայրն էր Երեւան-Գառնի ճանապարհի վրայ մէկ այլ հպարտ ճակատ՝ Արարատով պսակուած Չարենցի գեղատեսիլ կամարը: Այդ ճանապարհորդութեան ընթացքին, պատուհանէն դիտեցինք գեղադալար տարածութիւններ ու բառը իմաստաւորուեցաւ որպէս տեղանուն, ամենամօտիկը՝ նոյն մարզի մէջ «Ճակատ» լեռն էր:

Չարենցի կամարի սեւաքար ճակատի տակ անխուսափելիօրէն մտածեցինք, թէ քանի քանի սերունդներ դիմացի սէգ ճակատը դիտելով արտասաներ էին «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը: Հիմա հերթը այս սերունդինն էր: Անոնք ալ արտասանեն ու անցնին. Ես իմ անուշ Հայաստանի, արեւահամ բարն եմ սիրում...

Ուշ միջնադարուն բառը դուրս ելաւ վանքերէն, դադրեցաւ խոհուն վանականներու ու ռազմիկ իշխաններու պատկանելէ: Գեղեցկացաւ ան, դարձաւ քնարական՝ երբ հայ աշուղը հիացիկ դիտեց գեղեցկուհիի մը սպիտակ ճակատը: Երբ, հայկեան օրացոյցի ճակատը ցոյց կու տար 999 թուականը, Վանայ ծովու ափին, Նահապետ Քուչակը հառաչեց. «Թուխ աչք եւ ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես»: Նոյն թուականներուն Ստեփանոս տաղասացը ըսաւ. «Սպիտակ ճակատ, բարակ ունքերդ է կամար / Աչերդ ծով, ես, խեղճ, եղայ նաւավար»: Ժողովրդական երգերու մէջ ալ փայլեցաւ ան. «Ակ ճակատ, կամար ունէր, / Ծով աչեր՝ լոյս ի վառ ունիս...», «Պագնեմ զքո լայն ճակատդ, / Որ աչեր ունիս ղազալի»: Ապա Նաղաշ Յովնաթանը, 1600ներու սկիզբն էր, երգեց. «Լայն եւ սպիտակ ճակատ, երեսդ՝ վարդի թեր»: Իսկ Գարեգին Սրուանձտեանցի «Մանանայ» ժողովածուին մէջ դեռ կը լսուի Յովհաննէս տաղասացի խօսքը. «Սպիտակ ճակատ, թուխ թուխ աչեր»: Աշակերտները շարունակեցին... Ու Նայիրեան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում...

Ապա եկան մեր պատմութեան կնճռոտ օրերը: Հայու քնարը դարձաւ տխրամած: Պետրոս Դուրեանը «Վիշտք հայուն» քերթուածին մէջ ողբաց Հայաստանի անմխիթար վիճակին. «Եւ ճակատդ կրես պսակ / Արդ փշահիւս, սեւ նոճի / Քրտունքներ սառ՝ քար կտրած՝ / Կնճռոտ ճակատդ պճնեցին»: Բանաստեղծը, որ ըստ Արշակ Չօպանեանի, ունէր «լայն տժգոյն ճակատ», օր մը, ներհայեաց զանգատեցաւ. «Այս ճակատագիրն ի՛նչ սեւ է, Աստուա՛ծ», ու շարունակեց. «Զեփիւռն չեկաւ նժդեհ ճակատս շոյելու»: Մկրտիչ Պէշիկթաշլեանը հաւատքն ունէր անոր անմահութեան. «Ո՜հ, իմ պայծառ փայլէ ճակատ / Ի շողիւն յաղթանակաց պերճ»: Վենետիկի մէջ Հ. Ղեւոնդ Ալիշանը «Յուշիկք հայրենեաց հայոց» աշխատասիրութեան մէջ խօսեր էր հայու «արշալոյս» եւ «սրբեալ» ճակատներու մասին, իսկ 1901 թուականին, Հ. Վարդան Հացունին գիշեր մը, Ս. Ղազար կղզիի մէջ լապտեր մը բռնած գնաց վանական գերեզմանոց ու խոկաց. «Ճակատներ՝ մտածութեան եւ ժամանակի ծանրութեան ներքեւ ճնշուած ու լո՛ւրջ... Ճակատներ՝ աշխոյժ, կայտառ... Ճակատներ՝ փափուկ, ժպտուն»: ... Ու հնամեայ քաղաքների հազարամեայ քա՛րն եմ սիրում...

«Ճակատ» բառի առջեւ խոնարհած ու անոր համար մարգարտեայ տողիկներ գրած բանաստեղծ է Դանիէլ Վարուժանը: Կարդանք ընտիր տողերու փունջ մը՝ մինչ աշակերտները շարունակեն արտասանել Չարենցի գլուխ գործոցը. «Թող ճակատիդ վրայ գրուի հարիւր սաղմոս իմաստութեան», «Արշաւանքիս արիւնն է՝ զոր ճակատս իմ կը դրոշմէ», ... Չե՛մ մոռանայ ես ողբաձայն երգերը մեր... «Ճակատնե՜ր՝ լի խորշոմով, խորշոմնե՜ր՝ լի քրտինքով», ...Աղօթք դարձած երկաթագիր գիրքերը մեր... «Ահա Արեւ՜ն, Արեւ՜ն ահա. լոկ ձեզի՝ Այսօր կը նայի. կը համբուրէ միայն ձե՛ր ճակատներ», ...Ինչքան էլ սո՜ւր սիրտս խոցեն... «Դուն գիտես լոկ ճակատագիրս ահաւոր», «Մարմարեայ՛ ճակատէդ պոռթկաց Արիւնդ հրաշող Արշալոյսին պէս ծագող» ... Արիւնաքամ վէրքերը մեր:

Այդ օր լսեր էինք, թէ մայրաքաղաքէն շատ հեռու, Սիւնիքի մարզի սահմանամերձ Ճակատեն գիւղը կ'ապրէր ճակատագրական օրեր: Գիւղապետը. «Ճակատեն գիւղում... հինգ-վեց ընտանիք է ապրում: Վեց տարիներին գիւղում երեխաներ չեն ծնուել: Ճակատենում ճակատ են տալիս ապրելու





Շար.ը էջ 19

# STOP FALSE ACCUSATIONS
# STOP SPREADING FALSE INFORMATION

**Piknik** cheese made by **Nordex Food** is a private and family-owned company.The founders and the owners are 100% Danish.

**NO DONATIONS ARE MADE TO ANY COUNTRY WHAT SO EVER.**

**Legal action will be taken against any company or individual who spreads the false accusations.**

# ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ԱՆՀԻՄՆ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
# ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ՍՈՒՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼԸ

«Փիքնիք» պանիրը պատրաստուած է «Նորտէքս Ֆուտ»ի կողմէ, որ անձնական ընտանեկան ընկերութիւն մըն է: Հիմնադիրները և տէրէրը 100 տոկոսով դանիացի (Danish) են:

ՈՐԵՒԷ ՆՈՒԻՐԱՏՈՒՈԹԻՒՆՆԵՐ, ՈՐԵՒԷ ԵՐԿՐԻ ՉԵՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ:

**ՕՐԻՆԱԿԱՆ-ԴԱՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ՊԻՏԻ ԱՌՆՈՒԻՆ ՈՐԵՒԷ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՈԵՒԷ ԱՆՀԱՏԻ ԴԷՄ, ՈՐ ԿԸ ՏԱՐԱԾԷ ԱՆՀԻՄՆ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ:**

Dear customer,

NORDEX FOOD is a privately owned Danish company with production and sales of white cheese to the whole world.

The PIKNIK/Sütdiyari/Dairyland White Cheese is produced at our dairy in Austria with Austrian milk.

NORDEX FOOD do not support any political agenda in any country.

Best regards
NORDEX FOOD A/S

Martin Pedersen, CEO

NORDEX FOOD A/S
Nordre Ringgade 2 · DK-9330 Dronninglund · Denmark
Phone: +45 96 47 15 00 · Fax: +45 96 47 18 00

export@nordex-food.dk
www.nordexfood.dk
CVR-nr. DK 16 59 40 06



# Հայ Հոգեւորականները Արցախեան Առաջնագծում

*Հայց. եկեղեցին Գարեգին Ա Ներսիսեան Գահակալ Առաջնորդով, հոգեւոր սպասաւորներով, իր թեմերով, աւելի քան երբեւէ, թէ՛ հոգեւոր արարողութեամբ, թէ՛ զէնքով կանգնած են հայոց բանակի կողքին: Հայ հոգեւորականը՝ մէկ ձեռքին Քրիստոսի յաղթական Սուրբ խաչը, իսկ միւսին էլ սուրը միշտ էլ եղել է հայ զինուորի կողքին յատկապես պատերազմների ժամանակ, լիովին այդպէս է նաեւ այսօր, Արցախեան պատերազմի այս ծանրագոյն օրերին, երբ Վեհափառ Հայրապետից մինչեւ դպիր, Ս. Էջմիածնի միաբանները կանգնած են իրենց կեանքով մեր յաղթանակը ապահովող հայ զինուորի կողքին: Սարդարապատի օրեր են որոշապէս, երբ հայ զինուորները Ս. Էջմիածնի ղօղանջների ներքոյ իրենց ուխտը կատարեցին եւ իրենց կուրծքը դարձրին վահան հայրենիքի պաշտպանութեան: Այսօր նոյնն է, երբ հայ զինուորին ուղեկցում է հայ հոգեւորականը, որ հոգին վերածել է խունկ ու աղօթքի հայոց երկնքի տակ:*

*Պատերազմի առաջին իսկ րոպէներից լսուեցին մեր հոգեւոր առաջնորդների պատգամները, որ յաճախ մարտակոչի էին նմանում:*

*«Արցախ հայրենի մեր երկիրը վերստին կանչում է մեզ ամենքիս՝ պաշտպանելու մեր ազգի իրաւունքները, մեր սրբազան հողը, մեր ապագան ու ազգային արժանապատուութիւնը: Կոչ ենք անում մեր ժողովրդին միասնութեան եւ քաղաքական բոլոր ուժերին՝ ստորադասելու հակասու-*



*թիւնները յանուն Հայրենիքի պաշտպանութեան կարիքների» (Գարեգին Բ):*

*«Սիրելի հայրենակիցներ, կոչ եմ անում լինել միասնական, ամուր, անկոտրուն: Այս անգամ եւս ապացուցենք, որ մեր միասնականութիւնը անպարտելի ուժ է: Սիրելի արցախցիներ, սիրելի զաւակներ իմ, եղէք ամուր, զօրեղ, խոհեմ ու խիզախ: Ձեր ոգին ամրացրէք եւ հզօրացրէք անկոտրուն ուժով եւ միասնականութեամբ: Աստուած մեզ պահապան, զօրավիգ եւ օգնական» (Պարգեւ Արք. Մարտիրոսեան):*

*«Յաղթանակը մեր բարոյական կեցուածքին մէջ է: Մնանք հաւատարիմ մեր նախնեաց հաւատքին, չմնանք անտարբեր, վայրկեան առ վայրկեան ապրինք հաւատքով, մեր մէջ կրենք ցաւը մեր հայրենակիցներուն, բայց մնանք հպարտ ու անկոտրում մեր կամքի ու յարատեւելու պայքարին մէջ: ...Մնանք համախումբ մեր աղօթքին մէջ, քաջարի մեր պայքարին մէջ, որպէսզի անսասան պահենք հայրենիքը՝ նահատակ մեր զինուորներու արեամբ նուիրագործուած» (Յովնան Արք. Տէրտէրեան):*

*Դեռեւս 1997 թուականին հայոց զինուած ուժերում ստեղծուեց Հոգեւոր առաջնորդութիւն,*



*երջանկայիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի եւ ՀՀ պաշտպանութեան նախարար լուսահոգի Վազգէն Սարգսեանի նախաձեռնութեամբ: Այդպիսով տասնեակ սարկաւագներ ու քահանաներ զինուարագրուեցին բանակի կեանքին՝ որպէս գնդերէց իրենց հոգեւոր սպասաւորութիւնը բերելով զօրամասերում, առաջնագծում:*

*Մեր եկեղեցու ու բանակի հատման կէտը դարձան գնդերէցները, որոնք յատկապէս պատերազմական այս ծանր օրերին քաջաբար շարունակում են իրենց ծառայութիւնը առաջնագծի ողջ երկայնքով՝ Օմարի լեռներից մինչեւ Մարդակերտ, Մարտունի, Հադրութ, Ջրական, Կովսական ու Բերձոր եւ այլուր:*

*Ի դէպ, հոգեւոր սպասաւորութիւնից բացի, ազատագրուած տարածքներում ու զօրամասերում գնդերէցները կազմակերպել են մի շարք մատուռների, աղօթատեղիների, գողտրիկ եկեղեցիների կառուցումներ, ուր մշտապէս իրենց աղօթքն են մրմնջում զինուորները՝ առաջնագիծ կամ մարտի մեկնելիս: Այդպիսի մի գեղեցիկ օրինակ է Արցախի հարաւային կողմերի Մեխակաւան զօրամասում Տ. Գեւորգ Քհնյ. Աբեանի նախաձեռնութեամբ ու ջանքերով կառուցուած եկեղեցին: Նրա քարերը բերուել են Արաքսից զինուորների ձեռքերով, օծուել է 2017 թ. հոկտեմբերի 1-ին, տարիներ այն ծառայում էր հարաւային զօրմասերի զինուորների ու շրջակայ գիւղերի բնակիչներին: Եւ վերջին օրերին պատահեց այն, ինչ պատմութեան մէջ կոչւում է՝ «այստեղով թուրքն է անցել»: Ռազմական գործողութիւնների ընթացքում թշնամին խոցել է եկեղեցին, որ այժմ կիսախոնարհուած է եւ սպասում է ազատագրութեանը:*

*Հայոց եկեղեցիների նպատակադրուած թիրախաւորումը շարունակուել է անընդհատ, որի ամէնից ցայտուն օրինակը Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչն եկեղեցին է, որի ռմբակոծման ականատեսը եղան արտերկրի լրագրողներն ու հիւրերը:*



*Բանակում ու յատկապէս առաջնագծում, շարունակուող պատերազմի ժամերին անգամ հոգեւոր սպասաւորները մկրտութիւն են կատարում:*

*«Պատկերացրէք, հինգ-տասը րոպէ յետոյ այդ զինուորը լինելու է կռուի դաշտում, չգիտի ողջ է մնալու, թէ ոչ, բայց որպէս խսկական քրիստոնեայ կնքւում է: Հզօր տեսարան էր: Հենց սրանով է տարբերւում առաջին քրիստոնեայ ժողովուրդը անյայտ ցեղախմբերից», սա ռուս գործիչ Ալեքսանդր Բռոտայի վկայութիւնն է առաջնագծի իր տեսածից:*

*Հոկտեմբերի սկզբից Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ առաջնագիծ բերուեց Աշոտ Երկաթի խաչը՝ խաչափայտի մասունքով, որ մեր բանակի պահապան մասունքն է: Այն առաջնագիծ տարած Տաթեւ Եպիսկոպոս Յակոբեանը զինուարականների հետ հանդիպմանն ասում է. «Մենք ձեզի առջեւ կը խոնարհուինք, մենք ձեզմով հպարտ ենք, թող Աստուած ձեր աջը զօրացնէ, որ-*



*պէսզի կարողանաք թշնամին հետ մղել այս սուրբ հողէն: Այսօր պիտի յաղթենք, վաղը պիտի յաղթենք, յաւիտեանս յաւիտնից պիտի յաղթենք, որովհետեւ Աստուած մեզի հետ է»:*

*Նկարում Աւագ Գնդերէց Գոռ Սրկ. Գիւրճեանը՝ Աշոտ Երկաթի խաչով: Չկայ, երեւի, աւելի առինքնող ոգեղէնութիւն, քան տեսնել գնդերէցին՝ սքեմի վրայից զրահաբաճկոնով, ձեռքին ինքնաձիգը, դիրքերում զինուորների կնունքի ծէս կատարելիս, շուրթերին աղօթքը, իսկ մարտից առաջ շուրթերին բոցաշունչ հայրենասիրական մարտակոչ-երգը:*

*Իրապէս, պատերազմում է նաեւ Հայոց առաքելական եկեղեցին, բանակի ու աշխարհազօրի կողքին, ուս-ուսի տուած: Եւ այդ պատերազմում ունենք անդառնալի կորուստներ: Հերոսի մահով նահատակուեցին Նարեկ սրկ. Պետրոսեան եւ Ռուստամ սրկ. Պօղոսեան, լուսաւոր զաւակները մեր ժողովրդի ու եկեղեցու:*

*Վիրաւորւում են ստացել Արագածոտնի թեմի միաբան Խաչիկ*



*Սրկ. Վարդանեանը, Ամարասի վանահայր Տ. Գեղարդ Աբղ. Յովհաննիսեան, որ պատերազմական գործողութիւնների առաջին օրից որպէս կամաւոր մեկնել էր առաջնագիծ: Հայր Գեղարդը գլխի ծանր վիրաւորումից հրաշքով փրկուել է եւ այժմ բժիշկների հսկողութեան ներքոյ է:*

*Երբ տեսնում ես բանակի եւ եկեղեցու այս ներդաշնակ միաձուլումը, հասկանում ես, թէ ինչ դեր էր կատարում Ղեւոնդ Երէցը Աւարայրի օրերին, ինչու էին անդադար ղօղանջում հայոց եկեղեցիների զանգերը մեծ Սարդարապատին եւ ինչու էր սգ Էջմիածնում այդ ճակատագրական օրերին մնում Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ 5-րդը: Եւ պատերազմական այս օրերին այլ բան չի կարելի ասել, քան՝*

*Փառք քեզ, հայոց բանակ, հայոց զինուոր, սպայ, պահեստազօր ու աշխարհազօր եւ փառք քեզ հայրենապահութեան խորհրդանիշ հայոց եկեղեցու սպասաւոր:*



# Պատմական Տեղեկանք
# Վաղեմի Ժամանակներից Մինչեւ Նոր դարեր Արցախ Աշխարհի (Լեռնային Ղարաբաղ) Մասին

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ
(Շարունակուած նախորդ թիւէն)

«Էդ Ո՞ւմ Վրայ էք թուր հանել: Հայոց Մեծ Ազգին Չէ՛ք ճանաչում»:
Վէրք Հայաստանի - Հերոսավէպ - Խաչատուր Աբովեան



ԽՍՀՄ-ի առաջին ու վերջին ապիկար նախագահ Գորբաչով, իր համախոհներով հայերի պատուիրակութեան հետ հանդիպման ատէն յայտարարել էին, պատմութեամբ տարածքային հարց չեն լուծում: Հիմա զղջացել է ...: Ամերիկայի Միացեալ Նահանգների պաշտօնաւարող Պետական Քարտուղար՝ Փոմփէօ յայտարարել՝ «Կը նստին բանակցային սեղանի շուրջ՝ փորձելով հասկանալ այդ իսկապէս պատմական եւ բարդ խնդիրներու շարքը: Ղարաբաղի հակամարտութիւնը պատմական եւ բարդ խնդիր է»: Քարտուղարը յայտարարել նաեւ, որ այդ կռիւ, պատերազմ չէ, հանցագործութիւն է: Կարծում ենք պետական քարտուղարի խօսքը անշուշտ նաեւ իր եկրի նախագահի խօսքն էր: Աշխարհը մեկնաբանում է հայերի կռիւը, մարդասիրական նպաստ ճամբում: Զարմանում են հայերի կռուի յամառ ոգու դրսեւորումով, քաջին վայել կռուի խիզախումներով: Մի՛ վատաբանէք Ռուսաստանին, նրա զէնքով ենք դուշմանին զարկում, հեռու չէ այս կռուին նրանց միջամուղ լինելը, Թուրքիան ոչ բացայայտ մասնակից է, ահաբեկիչներ վարձում մասնակցելու հայոց կռուին, սպաննւում են, կռուից փախնում են, գերավարւում են, Ռուսաստան մտահոգ է հարաւային Կովկաս նրանց ներթափանցելուն:

Հայակական բանակի զինուորներ, իրենց պարտադրուած կռուին ելած կամաւորներ, աշխարհազօր, պաշտպանական ճակատամարտերի կռիւներում հիւծել են դուշմանի բանակը, նայէ՛ք մամուլի առանձին հրապարակումներին ոչնչացուած սպառազինութեան տուեալներին, անձնակազմի կորուստներին, ասում են, որ կռւում ընկած զինուորներին Նախիճեւեան են յուղարկաւորում, որ երկրի մարդիկ տեղեակ չլինէին նրանց Թուրին: Ռազմի դաշտում հայոց գոյամարտն է, իրենց հազար-հազար դարերի բնակավայրը, տուեալներ բերել եմ նախորդ թւում երեք հարիւր տարիներ առաջ Դաւիթ Պէկն էր Օսմանցիների դէմ կռիւ տուել այդ հողում, Ջալալեան կաթողիկոս, թուածս հինգ մելիքների հետ երդուել պաշտպանել երկրամասը: Մի քանի օրեր առաջ կռւում վիրաւորուած հայոց բանակի հրամանատար Ջալալ Հովհաննիսեան առաջնորդում էր իրենց կռիւը, Ջալալը՝ կաթողիկոս Ջալալեանի տոհմից չէ՞ր արդեօք ... :

469 թուականին Ալբանիայի թագաւորութիւնը լուծարքի ենթարկուելուց յետոյ, Արցախը մնացել էր այդ թագաւորութեան տարածքի եւ դրացի պարսկական մարզպետութեան կազմում, որը ստացել էր «Ալբանիա» (Արան) անուանումը: Հարիւր տարի անց, վեցերորդ դարի վերջում ու եօթերորդ դարի սկզբում Ալբանական մարզպետութեան հիւսիսային տարածքը բաժանուել էր առանձին մասերի՝ մելիքութիւն-իշխանութիւնների-իշխանապետութիւնների, որոնք հնդէս եկել այնտեղ բնակած տոհմերի ու իշխանական տների անուններով, կորցրել էին իրենց հնուց մնացած տեղի «Ալբանիա» եւ հաւաքական «Ալբանացիներ» անուանումը:

Ուտիք երկրամասի հարաւում ու Արցախում կազմաւորուել էր հայկական Արանշահիկ իշխանութիւն: Հինգերորդ դարի վերջում եւ յետոյ էլ ութերորդ դարում իրենց ցեղի անուանումը փոխել պարսկական ծագում ունեցող Միհրանիկներ անունով: Այդ վերջինը, որպէս ժառանգութիւն ստացել կառավարման-վարչական «Աղեանք» (Ալբանիա) անուանումը: Սակայն վերատեղափոխուելով հիւսիսից-հարաւ, ստացել ճշգրիտ աշխարհագրական բովանդակութիւն, յիշեցրել մի ժամանակ առաջ մարզպանութեան գոյութիւնը, կապը «Սեփական Ալբանիայի» հետ:

Ալբանիա անուանումը Ուտիք-Արցախի հետ դարձել հոմանիշ՝ հայկական դասական հեղինակների աշխատութիւններում անուանուել՝ «Հայաստանի արեւելեան երկրամաս», «Հիւսիս արեւելեան երկրամաս, «Ալուան, այսինքն Ալբանիա, երկրամաս»: «Հեռաւոր Հայաստան»: Տասնըմէկերորդ եւ տասներկրորդ դարերի պատմիչ Մաթէոս Ուռհայեցի պատմիչը գրելով «Ալբանիայի», «Ալբանական աշխարհի» մասին, յայտարարել է՝ որ այժմ այն անուանում են «Խորքային Հայաստան»: Քաղաքական եւ մշակոյթային պատմութեան կեանքը, մասնաւորապէս այդ երկրամասերը, հիմնական բովանդակութնը կազմում է Հայ պատմիչի տասըերորդ դարի աշխատանքի բովանդակութիւնը: Ռուսական հրատարակութեան Ռուսաստանի Զօրավարները պատկերազարդ հատորին եմ ծանօթացել, որտեղ մասնաւորպէս այլոց թւում կարդացել զօրավարներ Մատաթովի ու Բագրատիոնի մասին: Մատաթովի ծննդեան վայրը նշուել էր՝ «Ծնուել է Հայաստանի ծայրագոյն մասում՝ Ղարաբաղում», իսկ Բագրատիոնի մասին՝ «Ոնէր Վրացական Իշխանական տիտղոս», առանց նշելու ծննդեան վայրը ու ազգութեան պատկանելիութիւնը», ափսոս որ հայկական ծագումով բազմաթիւ ուրիշ ականաւոր զօրավարների մասին յատկանշանական տեղեկութիւններ չեմ յիշում: Մադաթով, Ռուսական բանակի խրոխտ զօրավար, ինքն էր ռուսական գունդերը առաջնորդել Իրանի դէմ կռուի, նուաճել խանութիւնների տարածքները, նրա իսկ մասնակցութեամբ շահական Իրանի հետ կնքել Գիւլիստանի հաշտութեան պայմանագիրը:

Բիւզանդիոնի Կոնստանտին Փօրֆիրօրօդ կայսրը (913-959) իմանալով, որ Խաչէնի իշխանութիւնը Հայաստանի տարծքում է գտնւում, նրա անունով նամակը ուղղել՝ «Հայաստանի Խաչէն իշխանին», նշումով:

Այդ երկրամասի պատմութիւնը Հասան Ջալալեանի իշխանութեան ժամանակ, Զաքարէ եւ Իվանէ Երկարաբազուկների քրոջ որդին ու նրա հետնորդներ ու ժառանգորդները խելամիտ եղել պատուիրելու հայկական Գանձասար վանքի եւ ուրիշ ճարտարապետական յուշարձաններին կատարել բազմաթիւ արձանագրութիւններ: Իրենց աշխատութիւններում նման յիշատակումներ կատարել են պատմիչ Կիրակոս Գանձակեցին, Վարդան պատմիչը, Ստեփանոս Օրբելեանը եւ շատ ուրիշներ:

1240 թուականի մի աշխատութիւնում Գանձասարի Հասան Ջալալեանի թոռը իրեն ներկայացրել է այսպէս՝ «Ես, Աստուծոյ խոնարհ ծառայ Դաւլա Հասան Ջալալեան, որդին Վախտանգի, թոռը Բարձր ու Մեծն Արցախ աշխարհի բնիկ ու ինքնիշխան թագաւոր Մեծն Հասանի, տիրակալը Խաչէն երկրամասի ընդարձակ տարածութեանը»:

Եթէ այդ իշխանութիւնների տիտղոսի անուանումներին կամ արձանագրութիւններում երբեւիցէ հանդիպել են՝ Ալբանիա-Արեանք տեղաւանման յիշատակութեանը, այսպէս էր Ի.Ա. Օրբելին իր խօսքով յայտարարել «Միայն վերապրում էին այդ կորուսեալ տիտղոսները»:

Ուշ միջնադարում, իր տարբերութիւն Իրանի ու Թորքիայի ենթակայութեան տակ ընկած Հայաստանի կեդրոնական երկրամասերի որոշ տարածքների, Խաչէն երկրամասի հայկական հինգ մելիքութիւնները պահպանել էին իրենց յարաբերական ինքնիշխանութիւնը, ինչպէս՝ Վարանդա, Խաչէն, Դիզակ, Ջրաբերդ, Գիւլիստան: Նրանք երկրում ծաւալել էին հայկական ազատագրական շարժումներ, որդեգրել Ռուսական կողմնորոշում: Փաստագրական աղբիւրներից լաւ յայտնի են մելիքութիւնների գործունեայ պայքար կազմակերպելու շահական Իրանի ու Թուրքիայի դէմ: Խաչէն-ի հետ է կապուած եղել Իսրայել Օրիի, Աստրախանի Մինասի, Յովսէփ Էմինի կողմնորոշման առաքելութեան իրականացումը, ինչպէս նաեւ XVIII-րդ դարի Դաւիթ Բէկի զինուած պայքարը Թուրքիայի դէմ:

Իսրայել Օրի, Ազգային-ազատագրական շարժման քաղաքական գործիչ, արժէր նրա մասին յիշատակել: Ծնուել էր 1659 թուականին Սիւնիքի մարզ, Սիսեանում: Իսրայել Օրին եւ հայրը Մելիք Իսրայելին մասնակցել 1677 թուականին Էջմիածնում գումարուած գաղտնի ժողովին, ընտրուել պատուիրակ: Եւրոպա մեկնել, Հայաստանի ազատագրութեան հարցը ներկայացնելու նպատակով: Հաստատուել Գերմանիա, Դիւսելդորֆ քաղաքում, կապ հաստատել կայսրի հետ: Նրանց Առաքելութիւնը ձաղողուել էր, Կոստանդնուպոլիսում մահացած Կաթողիկոս Յակոբ Ջուղայեցիի մահուան պատճառով: Վերադարձել էին Հայաստան: Այնուհետեւ Իսրայել Օրին մեկնել էր Վենէտիկ, յետոյ էլ 1683 թուականին Փարիզ, որտեղ զինուորական ծառայութեան անցել որպէս՝ Հտեւակազօրի Լէյտենանտ, հեծելազօրի Կապիտան: 1688-95 -ին մասնակցել Անգլոյ-ֆրանսական պատերազմին, 1695 թուականին

Շար.ը էջ 19



# Յաւիտենական Հանգիստ Հոգելոյս Տէր Զաւէն Ա. Քհնյ. Տէմիրճեանի

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ



*Հինգշաբթի Հոկտեմբեր 15, 2020-ին, 93 տարեկան հասակին մեզմէ յաւէտ բաժնուեցաւ Հայց. Առաքելական եկեղեցւոյ վաթսուն տարիներու հոգեւորական, տիպար ամուսին, չորս համով հոտով զաւակներու հայր, տասը թոռնիկներու մեծ հայր եւ մէկ ծոռով բախտաւորուած՝ մեծ-մեծ հայր՝ հոգելոյս Տէր Զաւէն Ա. Քհնյ. Տէմիրճեան, մեծ ցաւ պատճառելով ոչ միայն իր ընտանիքին, այլեւ Տէր Հօր մօտէն ծանօթներուն:*

*Տէր Հօր տան կարգը տեղի ունեցաւ Չորեքշաբթի Հոկտեմբեր 21-ին Հայց. Առաքելական եկեղեցւոյ Վան Նայս քաղաքի Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ: Այդ օրուայ Ս. Պատարագը մատոյց Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ գլխաւորեց տան կարգի հոգեւոր արարողութիւնը: Առաջնորդ Սրբազան Հօր կողքին ներկայ էին Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Կաթողիկոս Արամ Ա.-ի ցաւակցագիրը, Արեւմտեան Թեմի նախկին փոխ Առաջնորդ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, որ կարդաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին գիրը:*

*Ներկայ էր Արեւմտեան Թեմի նահապետը՝ բազմավաստակ նախկին Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, ինչպէս նաեւ հոգեւորականներու հոյլ մը:*

*Ընտանիքին կողմէ խօսք առին հանգուցեալ Տէր Հօր երկու թոռնիկները՝ Զաւէն Տէմիրճեան եւ Մէրի-Անուշ Տէմիրճեան: Հանգուցեալի որդին, Ս. Պետրոս եկեղեցւոյ ժրաջան եւ սիրուած հոգեւոր հովիւ՝ Տէր Շնորհք Քհնյ. Տէմիրճեան շնորհակալական եւ սրտի խօսքով վերջ գտաւ եկեղեցւոյ տան կարգը, որմէ ետք սգակիրներու թափորը մեկնեցաւ Հոլիվուտ Հիլզի* Forest Lawn *գերեզմանատունը, թաղման կարգը կատարելու համար:*

***

*Հոգելոյս Տէր Զաւէն ծնած է 1927-ին Պաղեստինի Եաֆա քաղաքը: Ուսանած է Երուսաղէմի դպրեվանքը, ապա 1948-ին Լիբանան տեղափոխուելով ծառայած է իր հօր Տէր Մեսրոպ Ա. Քհնյ. Տէմիրճեանի պաշտօնավարած Մազրաայի եկեղեցւոյ մէջ, որպէս երգչախումբի ղեկավար եւ կիրակնօրեայ վարժարանի տնօրէն:*

*Հետեւած է Մեծի Տանն Կիլիկիոյ քահանայից երկամեայ դասընթացքներուն, 1961-ին քահանայ ձեռնադրուած է Լիբանանի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խորէն Արք. Բարոյեան (յետագային Կաթողիկոս) ձեռամբ, իսկ աւագութեան աստիճան շնորհուեցաւ Լիբանանի Առաջնորդ Գերշ. Տ. Արամ Եպս. Քէշիշեանի կողմէ (Ներկայիս Կաթողիկոս):*

*Ծառայած է Պէյրութի Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մինչեւ Ամերիկա գալը: Եղած է ուսուցիչ Պէյրութի Աբգարեան, Ֆհրամճեան եւ Կիլիկեան վարժարաններուն մէջ: Եղած է Լիբանանի Թեմի Դատաստանական Մարմնի անդամ:*

*Տէր Հայրը ամուսնացած է Մայրանուշ Աւետիքեանի հետ եւ բախտաւորուած են ինչպէս յիշեցինք չորս զաւակներով (երեք աղջիկ եւ մէկ տղայ), տղան՝ իր հօր եւ մեծ հօր պէս քահանայ ձեռնադրուած է:*

*Երէցկին Մայրանուշ չորս զաւակներու տէր ըլլալով հանդերձ, Տէր Հօր աջ բազուկն էր իր հոգեւոր ծառայութեան մէջ: Ան սկաուտի պէս պատրաստ որեւէ ծառայութեան կամ սպասարկութեան համար, որ եկեղեցին կարիքը ունի: Մեծագոյն համբերութեամբ եւ անսահման սիրով եւ քաղցրութեամբ իր նպաստը կը բերէր եկեղեցւոյ կեանքէն ներս:*

*1986-ին Տէր Զաւէն ԱՄՆ կը հաստատուի միանալու համար իր զաւակներուն:*

*ԱՄՆ-ի մէջ ընդառաջելով Լա Քրեսենթա Վալլի Ծուխի Ծխական Խորհուրդի խնդրանքին, Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, (որ մօտէն ծանօթ էր Տէր Հօր եւ ընտանիքին) զինք մեր Ծուխի Հովիւ նշանակեց, փոխարինելով Ծուխիս հիմնադիր հովիւ հոգելոյս Տէր Կոմիտաս Ա.Ք. Շիրինեան, որ առողջութեան պատճառաւ հանգստեան անցաւ:*

*Մենք Տէր Զաւէնին առաջին հանդիպումին իսկ սիրեցինք զինք: Անոր հոգեւորականի ֆիզիքական տիպարը, հագուածքը, խօսակցութիւնը, համեստութիւնը, ծառայասիրութիւնը, ճշմարտախօսութիւնը եւ անկեղծութիւնը մեր բոլոր վարչականներուն վրայ խոր ազդեցութիւն ձգած էր: Ճշմարիտ հոգեւորական մըն էր, որ միայն քաղցրախօսութիւն, հաւատք, յոյս եւ սէր կը բուրէր: Ծխականներուն մէջ սէր եւ համերաշխութիւն սերմանող, զանոնք գործի լծելու իւրայատուկ ձեւ մը ունէր:*

*Տէր Զաւէն մեր Ծուխը եկաւ, միայն չորս պատերէ բաղկացած սրահի մէջ սկսաւ գործել: Այն ալ մեր շատ սիրելի Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանին, ազնուահոգի հայուն կողմէ մեզի տրամադրեց Ամերիկահայ Գոլէճի սրահը: «Խնդրեմ ասիկա ազգային տուն է, ինչ կ՛ուզէք ըրէք եկեղեցիին համար», ըսաւ Դոկտ. Տէր Եղիայեան:*

*Տէր Զաւէն եւ Ծխական Խորհուրդի անդամները գործի անցան: Շարժուն խորան մը շինել տուին, մոմ վարելու ամաններ պատրաստեցին: Երգչախումբի եւ սարկաւագներու շապիկներ կարել տուին, գործածուած երգեհոն մը գնուեցաւ, Ամերիկահայ Միջազգային Գոլէճի աթոռները ամէն Կիրակի կը շարուէին, պատերուն վրայ տասէ աւելի սրբանկարներ գնուեցան եւ պատերուն վրայ զետեղուեցան: Այս բոլորը սուսիկ բուսիկ Տէր Զաւէնը կ՛ընէր, ո՞ւրկէ կը գտնէր այդ նուիրատուները չէինք գիտեր, միայն մէկ բան գիտենք, «անոնք Լիբանանի մեր Ծխականներէն էին» կ՛ըսէր մեզի: Այս բոլորի կողքին Տէր Զաւէն կազմեց շատ աշխոյժ Տիկնանց Յանձնախումբ մը, պատանեկան յանձնախումբ եկեղեցւոյ «Ներսէս Շնորհալի» անունով մկրտուած երգչախումբը, Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ վարժարաններ: Երկու-երեք շաբթուայ ընթացքին մեր Շաբաթօրեայ վարժարանը սկսաւ 110 աշակերտ-աշակերտուհիներով, 11 կամաւոր ուսուցչուհիներով եւ տնօրէնութեամբ հայերէնի ծանօթ մանկավարժ եւ երգի ուսուցչուհի՝*

Շար.ը էջ 19

# Մեր Սրտերում Ցաւ Կայ, Բայց Այդ Ցաւը Մեզ Ուժեղացնում է

Ռ. ԿՈՐԻՒՆ

*Տխրամած հայեացքով Արցախցի կին բնակիչը հեռուստատեսային լրագրողին խորագրի այդ խօսքն ասաց՝ ռմբակոծումների պատճառով նկուղում գտնուած միջոցին մի շարք կին ու երեխաներ շուրջ բոլորը: Լսելիս խորապէս յուզուեցի մտքերի մէջ ընկնելով մտապատկերումս շարքերով անցան այն սրտատանջ աւերածութիւնները Ստեփանակերտում, Շուշիում, Մարտակերտում եւ այլուր պատերազմական օրերի ընթացքում: Հազիւ առաջին պատերազմից յետոյ քսանեօթ տարիների ընթացքում կարգի էին բերուել քաղաքները շինութիւններով ժողովրդի քրտինքով, հիմնադրամի յատկացումներով եւ մի շարք բարերար անձերի միջոցով: Ինչպէս կարելի է ցաւ ու մորմոք չլինի մեր սրտերում, երբ նախայարձակ ոսոխը պատերազմ է սկսում ահ ու սարսափի մէջ պահելով ժողովրդին, վերից ու վարից ռմբակոծելով քաղաքները, քարուքանդ անելով հիւանդանոցները, դպրոցները, բնակելիք շէնքերը, մշակոյթի հաստատութիւնները եւ ամենաթանկագինը խլելով կեանքեր: Թշնամին քանդում եւ կործանում է հայի ապրելավայրերը, որպէսզի հայը թողնի եւ հեռանայ իր տնից ու քաղաքից, այս միտքը թշնամուն գերեզման կը տանի եւ չի տեսնի պապենական սուրբ հողից նահանջը:*

*Այո՛, սիրելի արծուասիրտ Արցախցի, ոչ թէ միայն քո սրտում ցաւ կայ այդ բոլորը տեսնելով եւ զգալով, այլ մեր բոլորիս սրտերում նոյն ցաւն է խօսում եւ տրտմեցնում, սակայն յոյժ գովելի այն հոգեվիճակը, որ այդ ցաւը քեզ ուժեղացնում է ապրելու եւ դիմադրելու, ամուր կանգնելու դժուարութիւնների դէմ մասնաւորաբար թիկունքում ի պաշտպանութիւն առաջնամարտիկներին ճակատներում, ուր զինուոր, կամաւոր եւ աշխարհազօր մէկ սիրտ ու հոգի դարձած կռիւ են տալիս՝ քերծերում, ձորերում, սարահարթերում , կիրճերում ու կռուադաշտում:*

*Հերոսական ճակատամարտ, անվեհերութեան ու սխրագործութեան անմեկնելի գոյամարտ:Նրանք իրենց առաքելութիւնը քաջագործութեամբ առաջ են տանում, այս անգամ եւս յաղթելու բազմաժանիք թշնամուն:*

*Ա՜խ, այս ինչ ճակատագիր է մեր հայերիս վզին փաթաթուել, որ չի թողնում խաղաղ կեանք ապրենք, այսքան տառապանք, այսքան տանջանք ոչ թէ միայն անցեալում, այլեւ Արցախի ինքնորոշման օրից թշնամին պարտութիւն կրելուց ի վեր շուրջ երեսուն տարի ընդմիշտ պարտութեան ոխը պիղծ սրտում սահմաններից կրակ է բացել խլելով բազմաթիւ երիտասարդ կեանքեր, նաեւ խցանել երկրի կենսատու ճանապարհները:*

*Այսպէս լացը մեր աչքերին եւ ողբը մեր շուրթերին կեանք ենք ապրել շարունակ, սակայն առանց յուսահատուելու, քանզի մեր ազատամարտիկները իրենց քաջագործութեամբ լուսավառ հորիզոններ են խոստանում :*

*Անարգ թշնամին բախտով եւ ուրիշների քրտինքով ու ներդրումներով նաւթահորերից հոսող դոլլարներով յղփացած չի թողել մեր արցախցին հանգիստ եւ խաղաղ կեանք ապրի, նա այդ դոլլարներով Եւրոպական, հրեական եւ ռուսական առաջադէմ զէնքերով գրեթէ Արցախի ամբողջ քաղաքները քար ու քանդ աւերակի է ենթարկել պատճառելով բազմաթիւ անմեղ մարդկանց սպանութիւններ: Արցախցի-Հայաստանցի երեսուն տարիների պատերազմ կարգավիճակում ապրել են տքնաջան ու քրտնաջան աշխատանքի վաստակով նաեւ հոգ տանելով պատերազմի հսկայագումար ծախսերին:*

*Պատերազմը շարունակւում է, մի բուռ հայութիւնը պարտաւորուած պատերազմում է իր գոյութեան համար, որպէս ազգ-ժողովուրդ իր հազարամեակների քաղաքակրթութեան անցեալը, ներկան եւ ապագան պաշտպանելու համար զէնք ի ձեռին ահրիման բազմահազար թուրքերի դէմ:*

*Անարդար պատերազմ, թշնամիներով շրջապատուած Հայաստան եւ Արցախ երեք միլիոնով ժողովուրդ ընդդէմ ադրբեջանի, Թուրքիայի, մեծաթիւ վարձկան ահաբեկիչների, տարբեր երկրներից մոլեռանդ խմբերի, որոնք ժանիքներ են սրել հայ ժողովրդին որպէս քրիստոնիա ոչնչացնելու եւ պատմութեան հարթակից ի չիք դարձնելու, մոլեռանդ եւ բութ մտքի արտադրանք, հայ ժողովուրդը ձեզանից աւելի զօրեղների հետ է չափուել, բայց շնորհիւ իր սխրագործ պապերի գոյատեւել եւ կռւում է ձեր պէս մարդատեացների դէմ:*

*Հայերը եթէ հաւատարիմ դաշնակից ունենային, այսօր ատրբեջան պիտի գոյութիւն չունենար, ցաւօք այսօրուայ մեր դաշնակիցը հայի եւ թուրք ցեղասպանի միջեւ հաւասարութիւն է դնում : Զարմա՜նք, թէ ինչպէս կարելի է հային եւ ադրբեջանցուն հաւասար տեսնել առանց նկատի առնելու հայ ժողովրդի ծառայութիւնները տարբեր բնագաւառներում:*

*Կը յուսանք մարտավարութեան փոփոխութիւն: Առածն ասում է՝ բարեկամ է, թէ թշնամի, դա կ'երեւայ քո նեղ ժամին: Ներկայ աշխարհաքաղաքական պայմաններում մեր դաշնակցի անտեսումը Արցախի նկատմամբ յետագայ զարգացող չարիքի մեծ աղէտի հեռանկար է սպասւում:*

# Փոխան Դամբանականի
## Հայրենակից՝ Սամուէլ Իլանճեանի Յիշատակին

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

*2009ին, գաղութիս Հ.Բ.Ը.Մ.ի բարձր հովանաւորութեամբ, նշուեցաւ խարբերդ ծնած միութենականի մը 65 տարիներու ե՛ւ թատերական, ե՛ւ ազգայինհասարակական գործունէութեան նուիրուած յոբելենական հրապարակային հանդիսութիւն մը:*

*Այդ օր, պատշաճօրէն եւ արդար, նաեւ նշուեցաւ նուիրեալ յոբելեարի զոհաբերող ոգին, վեր առնուեցաւ անոր անխոնջ աշխատասիրութիւնը եւ յատկապէս շեշտուեցաւ գաղութիս, նախապէս «Արտաւազդ», իսկ ներկայիս «Սաթամեան» թատերախումբի յաջողութիւններն ու նոր ծրագրումները, որոնք՝ շնորհիւ այս հայուն տեսիլքին եւ աշխատանքի կորովին ու կիրքին ու նաեւ անսակարկ սրամիտ եւ սակայն խանդավառող ոգիին, տարիներու ընթացքին ձեռք ձգուած էին:*

*Մէկ խօսքով, հրապարակուեցաւ սոյն հայուն նոյնքան դրական աստուածատուր շնորհները , հայ մշակոյթի անբաժան մասնիկը եղող՝ հայ թատրոնի նկատմամբ, մեղրահամ բնաւորութեամբ եւ բացառիկ կազմակերպչական ձիրքերով օժտուած, օրինակելի, պարտաճանաչ ու անխոնջ աշխատանքով իր ցուցաբերած գուրգուրանքն ու անհուն սէրը: Ու իբրեւ ազգասէր եւ ազնիւ հայորդի, նոյն ձեռնարկին ան պարգեւատրուեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի նախագահական բարձրագոյն շքանշանով, ու բացի նահանգային ծերակուտականներու գնահատագրերէն, իր ազնուափայլ կողակից տիկնոջ՝ հանրածանօթ երգչուհի Ժանէթ Գույումճեանի հետ միատեղ, ան նաեւ ստացաւ Ամենայն Հայոց Հայրապետէն՝ «Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքնաշանը:*

*Սակայն ո՞վ էր այս մարդը, որուն մահուան տխուր առիթով նման երկա՜ր նախաբանով մը կ'արձանագրեմ յարգանքի ու սրտի խօսքերս:*

*Պարզեմ. Հանգուցեալը՝ Խարբերդ ծնած, մեծ եղեռն «համտեսած» եւ ապա Պէյրութ մեծցած, եւ հոն ընտանեկան բոյն կազմած եւ պայմաններու բերումով բոլորին նման Միացեալ Նահանգներու Փասատինա քաղաքը հաստատուած՝ Սամուէլ Իլանճեանն է: Բոլորին ծանօթ մեր «Սամուէլը», որ օրեր առաջ, իր մահկանացուն կնքած էր, սուգի մատնելով իր կողակիցը, զաւակներն ու թոռները եւ բոլոր հարազատները, ինչպէս նաեւ իր պատկանած միութենականներն ու յատկապէս իր սրտին եւ հոգիին շատ մօտիկ պահուած՝ «Սաթամեան» թատերախումբի մեծ ընտանիքը:*

*Հաստատապէս ան, բոլորէս եւ բոլորէն փնտռուած անձն մըն էր: Բոլորիս եւ բոլորին՝ հարազատ մեծ հոգատար հայ մը: Բոլորիս եւ բոլորին՝ գործակից միութենական մը: Պարկեշտ ամուսին եւ գթասիրտ հայր ու մեծ հայր: Միշտ շեշտած եմ, ըսելով, թէ «մենք հայերս, մեր մեռելները մեզի հետ ապրեցնող ազգ մըն ենք, եւ մեր մեռելներուն սուգը մեր կեանքի արեւն ալ է»: Ահա օրինակը:*

*Այս բոլորը կ'ըսեմ ամէնէն անկեղծութեամբ եւ հարազատօրէն, որովհետեւ չորս տասնամեակներ առաջ, երբ ընտանիքովս Տիթրոյիթէն Կլէնտէյլ կը հաստատուէի,*



*թատերական ելոյթի մը ընթացքին առաջին իսկ պատեհ պահուն, նախ իրեն ծանօթացայ: Այդ վայրկեանին, անձնապէս բախտը ունեցայ զինք աւելի մօտիկէն ճանչնալու: Ու անկէ ետք յաճախ եւ տարբեր առիթներով, միասին բաժնեցինք զանազան մտածումներ: Նոյն սեղանին շուրջ զրուցակիցներ դարձանք: Անկեղծօրէն կիսուեցանք վիշտ, ցաւ եւ մտահոգութիւն ու ինչու չէ նաեւ խնդութիւն, ժպիտ, կեանք ու ծրագրում հաւասարապէս եւ պարկեշտօրէն: Ու այս ձեւով, բարի, հաւատարիմ եւ համեստ իր ներկայութիւնը վայելեցի արդարօրէն:*

*Թէեւ փոքրահասակ էր, սակայն մեծ էր նկարագրով եւ տարիքով: Լուրջ եւ զգայուն մարդ:*

*Ու ինչ մեղքս պահեմ, այս օրերուն քիչ մը ծանր պայքարեցայ այս հայրենակիցիս հին օրերու գեղեցիկ յուշերու թարմացումները ապրելու: Փորձեցի գնահատել եւ արժեւորել իր կեանքը, որ միաժամանակ ազգային հաւաքական ապրում ալ էր: Բոլորն ալ կը սիրէին զինք իր հեզաբարոյ նկարագրով եւ անուշ ժպիտով միատեղ: Անոնք, որոնք մօտէն ճանչցած էին իր խորունկ հոգին, անպայման պիտի հաստատէին այս տողերը: Մէկ խօսքով բարութեան եւ նոյնքան ալ բարի կամեցողութեան մարմնացում:*

*Մարդիկ կան, որոնք իրենց ապրած շրջանակէն ներս միութենական կամ այլ, տարիներու վրայ երկարող իրենց գործունէութեան ընթացքին, իրենց անսակարկ ճիգով եւ աշխատանքով, խղճի օրինակով եւ կամքի քրտինքով այդ անմիջական մեծ ու փոքր, նեղ կամ լայնատարած շրջապատի պատմութեան էջերուն՝ կ'արձանագրեն յստակ եւ ազնիւ տողեր: Իրենց կնիքը կը ձգեն լուռ եւ անձայն: Առանց թմբուկի եւ բացականչութիւններու: Այսպէս ալ կը յիշատակուին երկար ժամանակ: Ահա անոնցմէ օրինակ մը՝ Սամուէլ Իլանճեան անունով խարբերդցին, որուն մօտ աշխատանքի եռանդին խառնուած ժպիտը, բնածին արժէք էր: Այլ խօսքով՝ հպարտութիւն արթող ներկայութիւն, որուն՝ հայ մշակոյթի վերելքին եւ բարգաւաճման ի խնդիր պաշտամունքի հասնող տարած ճիգերն ու նուիրումը, վճռորոշ դերեր խաղցած էին ազգային մեր կեանքէն ներս: Ահա եւ իր արդար դերը՝ «Սաթամեան» թատերախումբի վերելքի կեանքին:*

*Ինծի համար Սամուէլ Իլանճեան կը մարմնաւորէ համեստ ու*

Շար.ը էջ 19

# Ողբ. Տօքթոր Վազգէն Ժամկոչեանի
## Մահուան Առթիւ

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

*Աս ի՞նչ թաց ու խոնաւ աշուն էր, որ անձրեւեց հոգիներու ու սիրտերու մէջ, Վազգէ՛ն...:*

*Աս ի՞նչ անժամանակ տխուր տերեւաթափ է, որ կը տանի «թացն ու չորը», Վազգէ՛ն..:*

*Միթէ ա՞յս էր մեր հաւատացած աստուածային ճիշդ ու անկողմնակալ արդարութիւնը, որ չի խնայեր կեանք ու արցունք:*

*Աս ի՞նչ անսպասելի տաք կարկուտ էր որ այրեց բոլորիս սիրտերը եւ ցանեց անսպասուած տխրութիւն, սուգի մատնելով բոլորս..:*

*Սիրելի Վազգէն, մահուանդ գոյժը ունեցաւ կայծակի արագութիւն, որ խորունկ ցաւ պատճառեց բոլոր քեզ ճանչցողներու հոգիներուն մէջ: Արդեօք ինչո՞ւ էր այս աճապարանքդ: Աս ի՞նչ անսպասուած ու անժամանակ գոյժ էր: Ինչպէս եւ ինչո՞ւ դարձար վայրկեաններու մէջ բացակայ...: Միթէ ա՞յս պիտի ըլլար բարի վերաբերմունքի տէր Վազգէն Ժամկոչեան մարդու եւ բժիշկի կեանքին տխուր աւարտը:*

*Քու ունեցած բարեմասնութիւններուդ համար, միշտ ալ գնահատած էինք ընկերային մաքուր բնաւորութիւնդ, ազնիւ նկարագիրդ, մասնաւորաբար նուիրուածութիւնդ: Իսկ ազգային, միութենական եւ հասարակական ոլորտներէն ներս արժեւորած՝ անգնահատելի պարտաճանաչութիւնդ եւ բծախնդրութիւնդ:*

*Անհաւատալի կորուստդ, ունեցաւ հարուածի ուժգնութիւն բոլորիս մօտ: Քու եւ մեր ունեցած ընկերային մաքուր կապը եւ յատկապէս ժողովական անդամի հանգամանքդ՝ «Խօսնակ»-ի յարկին տակ, առիթ էր, որ աւելի մօտէն ճանչնայինք քեզ, երեւոյթ մը, որ խոր արմատներ ձգած էր ժողովականներուս մօտ:*

*Սիրելի Վազգէն, դեռ հարցական է ինծի համար, թէ ինչո՞ւ համար այսքան շուտ ժամադրուեցար մահուան հետ, ու ոչ ոքի «Մնաս բարով» չըսած մեկնեցար՝ անմխիթար ձգելով ալեհեր հայրդ ու մայրդ, շատ թանկագին կինդ, հոգեհատոր զաւակներդ, սրտահատոր՝ քոյրդ ու եղբայրդ... ու հարազատներու մեծ փաղանգ մը, քեզ սիրողներու հսկայ անտառ մը, եւ աչքերու մէջ ցանեցիր աղի արցունք եւ հոգիներու մէջ՝ կրակ..: Կրակ մը, որ դժուար թէ օր մը դիւրին-դիւրին յանգի...:*

*Շնորհիւ քու վերաբերմունքիդ, հոգատարութեանդ, գուրգուրանքիդ ու նուիրուածութեանդ՝ ընտանիքէդ ներս թէ դուրս, միշտ ալ հանդիսացած էիր տիպար անձնաւորութիւն եւ դարձած՝ իրապէ՛ս տնաշէն մարդ..: Բայց այս վերջին արարքովդ դարձար յանկարծ տնաւե՛ր... բայց ինչո՞ւ, խօսէ՛..: Քու անժամանակ մեկնումդ դամբանի մրուր ցանեց չորս կողմ, յարգելի բժիշկ..:*

*... 2020 տարուան աշունը իրապէ՛ս դարձաւ տերեւաթափ եղանակ... որ թօթափեց յարգելի եւ թանկագին շատ կեանքեր գաղութէն ներս եւ այլուր: Ես, եւ ինծի նման հազարներ չեն հաւատար ու պիտի չհաւատան սա ճակատագիր կոչուած պատուհասի կանխահաս վճիռին, որ եկաւ վերջակէտ դնելու քու կեանքիդ, Վազգէ՛ն: Մահ կոչուած անողոք ու անդիմագիծ գազանը ինչպէ՞ս տարաւ քեզ, երբ դեռ ունէիր գունաւոր երազներ, ապագայի տեսակ-տեսակ ծրագիրներ՝ կապուած զաւակներուդ գալիք օրերու գեղեցիկ անակնկալներուն հետ: Բայց ինչո՞ւ շրջեցիր այս բոլորը եւ յանկարծ օրը վարագուրուեցիր մոխրագոյն շղարշով: Անհաւատալի սա պահուն, անկամ ու տխուր վիճակի մէջ երբ կը ջանամ երկու տող գրել, հաւատա՛ սիրելի Վազգէն, բառեր կը պակսին ինծի, որպէսզի թուարկեմ նախ՝ ՄԱՐԴ-մարդկայնութիւնդ, ապա՝ ջերմ հայասիրութիւնդ, ազգասիրութիւնդ, հայրենասիրութիւնդ, ժողովական մարդու բացառիկ նախանձախնդրութիւնդ:*

*Տակաւին մէկ երկու շաբաթ առաջ, անհամբերութեամբ կը զանգէիր, տեղեկանալու համար Արցախեան պատերազմի նորութիւններուն՝ յայտնելով խոր մտահոգութիւնդ: Սակայն, մեր խօսակցութեան աւարտին կ'ըսէիր յուզականութեամբ. «Սիրտս ամէնաշատ կը ցաւի մեր երիտասարդներուն, մեր նահատակներուն համար: Գիտեմ, պիտի յաղթենք, բայց այս երիտասարդները կը մահանան ծաղիկ հասակի մէջ, անոնք պիտի դառնային մեր վաղուան յոյսը»..:*

*Ի՞նչ իմանար խեղճ Վազգէնը, որ իր յայտնած խոր մտահոգութենէն հազիւ երկու շաբաթ ետք, ինք եւս պիտի մեկնէր այս աշխարհէն ու դառնար լուսաւոր աստղ մը յաւիտենականութեան մէջ..:*

*Ան, ապաբախտ Վազգէնը, միշտ կ'ուրախանար ու կը հպարտանար իր հայրենասէր ծնողներով, իր գիտակից ընտանեկան պարագաներով, իր կազմած երջանիկ ընտանեկան բոյնով, յարգարժան կողակիցով ու շնորհալի զաւակներով, որոնց յաջողութիւնը իր մեծագոյն երջանկութիւնն էր, պարծանքը: Այսօր, իր անժամանակ մահով սակայն, ան ակամայ խոր սուգի մէջ կը ձգէ իր որդեկորոյս ծնողները, անմխիթար կողակիցը, անհայր զաւակները եւ դժբախտացած քոյրն ու եղբայրը եւ բոլոր հարազատները եւ բարեկամներու հոյլ մը...:*

*Ճակատագրի խաղով ան թէեւ կը մեկնի հիմա, բայց իր ետին ձգած է իրապէս բարի անուն մը, հայ մարդու, օրինակելի ամուսինի, տիպար հօր, եւ ընկերային կեանքի մէջ բարեմիտ, ազնուական ու առաքինի մարդու անուն մը, որուն նմաններուն քիչ կը հանդիպինք կեանքի զարիթափին վրան:*

*Իր մեկնումը, իրապէս արցունք կը բերէ աչքես..: Ան եղբօր մը չափ հարազատ էր թէ՛ ինծի, եւ թէ՛ իր անկեղծ ու հաւատարիմ ընկերներուն համար: Զինք պիտի փնտռենք անպայման..:*

*Սեւ ճակատագիրը յարգելի դէմք մը եւս տարաւ այս աշխարհէն..:*

*Համբերութի՛ւն եւ մխիթարութիւն՝ տարաբախտ Վազգէնի ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

***ՎԱԶԳԷՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ** մահուան տխուր առիթով (մահացած Լիբանան) «Մասիս» իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր Մարտիկ Ժամկոչեանին:*

## Բառերու Խորհրդաւոր Աշխարհը

Շարունակուած էջ 13-էն

համար»: Նոյն երկրամասի մէջ Գարեգին Նժդեհը ըսեր էր. «Մայրերի ափի մէջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը... Յաղթութեան դիցուհին իր ոսկէ մատներով պսակադրել է հայ զինուորի ճակատը»: Յովհաննէս Թումանեանն ալ բացատրեր էր, թէ հայ ազգը ինչո՛ւ տոկուն է. «Հայ ժողովուրդը դարէդար ճակատ ճակատի է զարկել հին Պարսկաստանի ու Արեւելքի բոլոր աշխարհակալների հետ» ... Որբ ու արնավառ իմ Հայաստան եարն եմ սիրում:

Մտաբերեցինք մէկ այլ ճակատ՝ Գրիգոր Նարեկացին, զոր ընդունած ենք որպէս՝ «Հայկական քերթողութեան սրբալոյս ճակատ»: Եւ Պարոյր Սեւակը, տեսէք, ինչպէս պատուեր է անոր «Նարեկ» մատեանը. «Ո՛չ այնքան ընթերցուել է, որքան համբուրուել, դրուել ո՛չ այնքան դարակի կամ գրակալի, որքան հիւանդի ճակատի վրայ»: ... Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ:

Յաջորդ օրը հրաժեշտ տուինք հայրենիքին, առանց գիտնալու, թէ ինչ ճակատագիր կը սպասէր անոր... Յարգելի ընթերցող, երբ ճակատագրական օրեր կ'ապրի հայկեան հողը, լուսաւոր եւ համբուրելի ճակատներ կը զոհուին անոր համար՝ յօդուածս կ'աւարտեմ Ալեքսանդր Ղումաշեանի «Զոհուածները» բանաստեղծութենէն մէջբերումով մը.

Կեանք չեն ուզում արդէն զոհուածները մեզնից,

Փառք չեն ուզում, նրանք սիրոյ յանուն մեռան.

Սեւ գիր էր խարանուած նրանց ճակատներին,

Եւ սեւ նժոյգների հեծուորները եղան:

## Պատմական Տեղեկանք

Շարունակուած էջ 16-էն

անգլիացիները գերավարել էին նրան: Գերավարութիւնից յետոյ Հռենոս Պֆալցում եղել Հայդբերգի, ֆրանկենթալի եւ Մանհայմի մատակարակման կոմիսար: 1698 թուականին յորդորել էրհուրֆյուրստ Յովնան Վիլհելմին նուաճել Հայաստանը եւ Օսմանեան կայսրութեան թիկունքում ստեղծել անկախ Վրաստան ու Հայաստան: Նրա միջոցով Յովհան Վիլհելմը թղթեր հղել Քարթիի թագաւոր Գիորգի XI-ին, Հայ մելիքներին, Ամենայն Հայոց եւ Աղուանից կաթողիկոսներին՝ մանրամասն տեղեկութիւններ խնդրել Հայաստանի ու յարակից երկրների տնտեսական ու ռազմական կացութեան մասին: 1699 թուականին, Մելիք Սաֆրազ-ի եւ Սիւնիքի 11 մելիքների հետ Անգեղակոթում գաղտնի ժողով գումարել, խնդրել Եւրոպական երկրներից զինուորական օգնութիւն: Գերմանիայի ու Աւստրիայի հետ արդիւնքի չհասնելով 1701 թուականին մեկնել Մոսկվա: 1704 հանդիպել Գլեմենտ XI Հռոմի պապի հետ, որը խոստացել իր օգնութիւնը: 1707 թուականին, անհրաժեշտ պատրաստութիւններից յետոյ ռուսական բանակի սպայի հետ խոշոր զինուորական կազմաւորումով Պարսկաստան գնացել: 1711 թուականին Պարսկաստանից Ռուսաստան վերադառնալու ատէն Աստրախանում յանկարծակի մահացել:

(Շարունակելի 2)

## Յաւիտենական Յանգիստ

Շարունակուած էջ 17-էն

Փրոֆ. Անահիտ Խրլոբեանի:

Առաջնորդ Վաչէ Սրբազան դպրոցի բացման ներկայ եղաւ եւ զարմանքով ըսաւ. «Ես նկատի առած էի, որ 10-15 աշակերտներ պիտի տեսնէի այսօր, ուրախ եմ որ 100-է աւելի փոքրիկներ եկած են այս դպրոցը», գնահատեց Տէր Հօր եւ այդ օրուայ Ծխական Խորհուրդի բոլոր անդամները:

Հոգելոյս Տէր Զաւէնէն շատ հաճելի եւ մարդկային նկարագիր բացայայտող յիշատակներ ունինք: Իր խօսակցութեամբ եւ սիրով «պապա մարդ էր»:

Օր մը եկեղոյեան ժամը 7:00-ին Ծխական Խորհուրդի ժողովը սկսելէ առաջ, կանուխ գացած էի եկեղեցի, ես եւ Տէր Հայրն էինք: Հոն երիտասարդ անտունի (homeless) մը մեր եկեղեցին եկաւ եւ խնդրեց որ եկեղեցին զինք օգնէ, քանի որ լման օր մը բան մը չէ կերած եւ ինք Thousand Oaks անունով հեռու քաղաք մը կ'ապրի: Տէր Հօր հետ խօսեցանք գումար մը տուինք եւ եկեղեցիին մօտ գործող In-N-Out burger-էն կերակուր առնէ: Տէր Հայրը անմիջապէս ձեռքը գրպանը տանելով մարդուն կերակուրի դրամը պիտի տար, երբ ըսի, արդէն տուած եմ գումարը, ինք դարձաւ եւ ըսաւ. «Այս գումարը տանք թող հոս պանդոկ մը մնայ այս գիշեր եւ վաղը տուն երթայ, այս գիշերով ինչպէս Thousand Oaks պիտի երթայ», եւ այդպէս ալ ըրինք Տէր Հօր տուած դրամով Briggs եւ Foothill փողոցի վրայ motel մը տարինք իրեն, երբ վարչութեան կողմէ ուզեցինք Տէր Հօր տուած գումարը տալ, Տէր Հայրը ըսաւ. «Հոգ չէ ասիկա ալ իմ իմ կողմէս թող ըլլայ»:

Տէր Հայրը շատ գեղեցիկ խօսք մը ունէր, որ յաճախ կը գործածէր: Երբ դժուարութեան մը հանդիպէինք կամ գործ մը մեր ուզածին պէս չէր ընթանար, Տէր Հայրը կ'ըսէր. «Մի նեղուիք կ'երեւի Աստուծոյ կամքով չէ այս գործը, Աստուծոյ կամքով եղած գործը միշտ շիտակ եւ յաջող կ'ըլլայ», կ'ըսէր իր ծխականներուն:

Արդարեւ մենք այս խօսքը եւ մօտեցումը միշտ ալ գործածած ենք մեր ազգային եւ անհատական կեանքին մէջ, խունկ եւ աղօթք անոր բարի յիշատակին:

«Յիշատակն արդարին օրհնութեամբ եղեցի»:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

**ԱՐԺ. Տ. ԶԱՒԷՆ ԱՒ. ՔՀՆՅ. ՏԷՄԻՐՃԵԱՆԻ** մահուան տխուր առիթով Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի բոլոր հարազատներուն Ս. Պետրոս եկեղեցւոյ թաղական խորհուրդին, մասնաւորաբար իր զաւկին Արժ. Տ. Շնորհք Աւ. Տէմիրճեանին:

## Փոխան Դամբանականի

Շարունակուած էջ 8-էն

նուիրուած տիպար ու մաքուր նկարագրով հայրենակիցիս կեանքը, որ հարուստ էր ծառայասիրութեամբ, իմաստաւորուած աշխատանքով եւ անհատնում նուիրաբերութեամբ եւ որ բոլորիս համար դարձած էր իբրեւ տիպար միութենականի մը անբիծ եւ մաքուր օրինակը:

Ինքն էր, որ տարիներով եւ օրինակելի գնահատեց ճիշդն ու ճշմարիտը: Ներքնապէս ուրախացած էր իր ապրած գաղութի եւ նոյնքան ալ հայրենիքի արձանագրած նուաճումներով: Դարձեալ լուռ եւ զուսպ քննադատած՝ վատն ու սխալը: Մէկ խօսքով բոլորին համար բացառիկ հայ մը, անտրտունջ աշխատանքի նուիրումով միութենական մը, որ պարկեշտ ե՛ւ նուիրեալ ե՛ւ յանձնառու՝ ծառայեց անխոնջ իր սիրած եւ պաշտած թատերախումբին, միաժամանակ ծառայելով նաեւ հայ մշակոյթին: Ազգովին մեր մեծ ու փոքր սուրբերը, մեզի կը մղեն մտածելու շատ մը «բաներու» մասին մանաւանդ՝ մեր գուրգուրալի արժէքներուն:

Անոր համար կը հաւատամ, որ մենք բոլոր սգակիրներս, երկար տարիներ իր անուշ յիշատակը պիտի ապրինք մեր մտքերուն եւ հոգիներուն մէջ:

Արդ, այս առթիւ համեստօրէն մտքիս խորերէն յանկարծ ինքնածին, կը ծագի մեծ հարցում մը. Այս քանի մը էջերու մէջ, գրած տողերովս կամ արտայայտութիւններովս, արդեօ՞ք կարողացայ արդարացնել հանգուցեալ երէց հայրենակիցիս հայու ոգիի հաւատքին եւ հոգեկան մեծութեան հանդէպ ունեցած յարգանքս...: Անպայման:

Ուստի, իբրեւ սգակիր, իմ կարգիս՝ ափ մը խունկ եւ ծունկ մը աղօթք իմ կողմէ, իբրեւ երախտապարտ զգացումներուս արդար տուրք:

Բիւր յարգանք իր յիշատակին:

VA Print Media



Book Printing & Binding • Hard Covers
College Dissertations • Year Books
Restoration of Old Books & Bibles
Newspaper Archiving



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220
Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com
www.vaprintmedia.com

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

## «Ռոմայի» Յաղթանակն Ու Մխիթարեանի Հեթ-Թրիքը



*Իտալիոյ առաջնութեան 7-րդ հանգրուանին «Ռոման» հիւրընկալուեցաւ «Ջենոայէն» եւ առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:*

*Հեթ-թրիքի հեղինակ դարձաւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը:*

*Առաջինը յաջողութեան հասան հիւրերը: Առաջին խաղակէսի աւելացուած երկրորդ վայրկեանին աչքի ինկաւ Հենրիխ Մխիթարեանը: Ընդմիջումէն յետոյ «Ջենոան» կարողացաւ նշանակել պատասխան կոլը, սակայն 66-րդ վայրկեանին հայ ֆուտպոլիստը նշանակեց երկրորդ կոլը, իսկ 85-րդ վայրկեանին երրորդ կոլը:*

*Մայրաքաղաքային խումբը 14 միաւորով երրորդ տեղը կը գրաւէ:*

## «Միլանը» Իբրահիմովիչի Կոլի Շնորհիւ Խուսափեց Պարտութիւնէն Եւ Առաջատարն Է

*Իտալիոյի առաջնութեան 7-րդ հանգրուանին առաջատար «Միլանը» ընդունեց «Վերոնային» եւ աւելացուած ժամանակին շուէտ յարձակող Զլատան Իբրահիմովիչի նշանակած կոլի շնորհիւ խուսափեցաւ պարտութիւնէն:*

*«Միլան» 17 միաւորով առաջատարն է եւ 2 միաւոր առաջ է երկրորդ դիրքի վրայ գտնուող «Սասուոլոյէն»: «Վերոնան» 12 միաւորով 8-րդն է:*

## Սարգիս Ադամեանի Կոլը Չ’օգնեց «Հոֆենհայմին» Խուսափիլ Պարտութիւնէն



*Գերմանիոյի առաջնութեան 7-րդ հանգրուանին «Հոֆենհայմը» մրցակիցի խաղադաշտին վրայ 1:2 արդիւնքով պարտուեցաւ «Վոլֆսպուրկին»:*

*«Հոֆենհայմի» եւ Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանը նշանակեց հիւրերու միակ կոլը: Ան փոխարինման դուրս եկաւ 59-րդ վայրկեանին եւ մրցակիցի դարպասը գրաւեց 87-րդ վայրկեանին:*

*«Հոֆենհայմը» 7 միաւորով 13-րդ տեղը կը գրաւէ, «Վոլֆսբուրգը» 7-րդն է՝ 11 միաւոր:*

## Վան Պաստէն. Ով Կ’ըսէ, Որ Ռոնալտուն Մեսիէն Լաւ Է, Չի Հասկնար Ֆութպոլէն

*Հոլանտայի հաւաքականի նախկին ֆուտպոլիստ Մարկօ Վան Պաստեն անդրադարձած է «Պարսելոնայի» առաջատար Լիոնել Մեսիին ու Թուրինի «Եուվենթուսի» պորտուգալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալդուին:*

*«Կրիշտիանուն հրաշալի ֆուտպոլիստ է, սակայն անոնք, որոնք կ’ըսեն, որ ան Մեսիէն լաւ է, ոչինչ չեն հասկնար ֆութպոլէն: Կամ այդ այդպէս է, կամ անոնք այդ կ’ընեն անբարեխղճօրէն: Մեսին եզակի ու աննկրկնելի խաղցող է: Մանկութեան ան ինկած է ֆուտպոլային հանճարի կաթսայի մէջ»,- հոլանտացի լեգենդար յարձակողի խօսքը կը մէջբերէ Corriere della Sera-ն:*


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name:
Address:
City: State: Zip Code:
Country:
Tel: Email:


## «Մանչեսթեր Սիթի» - «Լիւերփուլ»՝ 1:1



*Անգլիոյի առաջնութեան 8-րդ հանգրուանին ախոյեան «Լիւերփուլը» հիւրընկալուեցաւ փոխախոյեան «Մանչեսթեր Սիթիէն»: Խումբերը բաւարարուեցան ոչ ոքի արդիւնքով՝ փոխանակելով մէկական կոլ:*

*«Լիւերփուլը» 17 միաւորով հաւասարուեց երկրորդ տեղի վրայ ընթացող Լոնտոնի «Թոթենհեմին»: Մէկ հանդիպում նուազ խաղցած «Մանչեսթեր Սիթին» 11-րդն է՝ 12 միաւոր:*

*Առաջատարը 18 միաւոր վաստակած «Լեսթեր Սիթին» է:*

## «Թոթենհեմ» Յաղթեց Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

*Անգլիայի առաջնութեան 8-րդ հանգրուանին Լոնտոնի «Թոտենհեմը» մրցակիցի դաշտին վրայ հանդիպեցաւ «Ուեստ Պրոմիչի» հետ: Փորտուկալացի Ժոզէ Մոուրինիոյի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:*

*Միակ կոլը նշանակեց անգլիացի յարձակող Հարի Քեյնը:*

## «Պարսելոնա» - «Պետիս»՝ 5:2



*Սպանիոյի առաջնութեան 9-րդ հանգրուանին գաթալոնական «Պարսելոնան» «Քամպ Նոու» խաղադաշտի վրայ ընդունած էր «Պետիսին»:*

*Հոլանտացի Ռոնալդ Կումանի գլխաւորած խումբը յաղթանակ տարաւ 5:2 հաշուով:*

*«Պարսելոնայի» կազմէն երկու կոլերու հեղինակ դարձաւ արժէնթինացի յարձակող Լիոնել Մեսին: Միւս կոլերը նշանակեցին ֆրանսացի ֆուտպոլիստներ Ուսման Տեմպելէն, Անթուան Գրիզմանը եւ սպանացի յարձակող Պետրին:*

*«Պետիսի» կազմէն կոլերու հեղինակ դարձան փարակուայցի յարձակող Արնալտօ Սանաբրիան եւ սպանացի յարձակող Լորէն Մորոնը:*

*Այժմ «Պարսելոնան» 11 միաւորով 8-րդն դիրքի վրայ է մրցաշարային աղիւսակին վրայ, «Պետիս» ունի 12 միաւոր եւ 7-րդ տեղը կը գրաւէ:*

## «Վալենսիա» - «Ռէալ»՝ 4:1

*Սպանիոյ առաջնութեան 9-րդ հանգրուանին ախոյեան «Ռէալը» հիւրընկալուեցաւ «Վալենսիային» եւ պարտութիւն կրեց 1:4 արդիւնքով:*

*Հեթ-թրիկի հեղինակ դարձաւ սպանացի կիսապաշտպան Կառլոս Սոլեր, որ երեք կոլն ալ նշանակեց 11 մեթրանոցէն:*

*Արքայական խումբի ֆրանսացի պաշտպան Ռաֆայէլ Վարանը դարձաւ ինքնակոլի հեղինակ: Իսկ հիւրերու միակ կոլը նշանակեց ֆրանսացի յարձակող Քարիմ Բենզեման:*

*«Ռէալը» 16 միաւորով չորրորդն է: «Վալենսիան» 9-րդն է՝ 11*

## Պեքհեմ Կը Ցանկայ Ռամոսին Հրաւիրել «Ինտըր Մայամի»

*Մատրիտի «Ռէալի» եւ Սպանիոյ հաւաքականի պաշտպան Սերխիօ Ռամոսը կրնայ մարզական ասպարեզը շարունակել հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի մէջ, կը հաղորդէ AS-ը:*

*«Ռէալի» կազմէն ներս Ռամոսի նախկին խաղակից, անգլիացի Տեւիտ Պաքհեմ կը ցանկայ 34-ամեայ ֆուտպոլիստին տեսնել «Ինթըր Մայամի» շարքերուն մէջ: Պեքհեմ ամերիկեան ակումբի համասեփականատէրերէն է եւ կը բանակցի Ռամոսի հետ:*

*Ֆուտպոլիստի պայմանագիրը «Ռէալի» հետ նախատեսուած է մինչեւ 2021թ Յունիս ամիսը: Կողմերը դեռ համաձայնութեան չեն եկած նոր պայմանագրի վերաբերեալ:*